

3197

ՏԱԼԻՆ

Ի՞նչ ՄԵՌԻԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԿԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՅՈՑԻԱԼԻՍՈՎԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ՀՄԴԱԿԱՆ ԱՐԵՆՔԸ)

3193

հ. 41

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՇ

21 JUN

17 NOV 2001

Ի. Վ. ԱՏԱԼԻՆ

3K33 — ար  
Բ1-11

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՍՈւՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԿԱԿԱՆ  
ԽԱՐՀՐԴԱՅԻՆ  
ՊՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՈւՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)


05.08.2013

3197

## Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՒՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
ՎԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ԱՐՏԱԿԱՐՔ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ  
25 ՆՈՅԵՄԲՐԻ 1936 թ.



980  
37

И. В. СТАЛИН  
О ПРОЕКТЕ КОНСТИТУЦИИ  
СОЮЗА ССР.

КОНСТИТУЦИЯ  
(ОСНОВНОЙ ЗАКОН)  
АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ  
СОЦИАЛИСТИЧЕСКОЙ  
РЕСПУБЛИКИ  
Армпартиздат, Ереван, 1937 г.

ՌԱԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Խորհուրդների

VIII Համամիութենական

Արտակարգ Համագումարում

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1936 թ.

Քննկեր ՍՏԱԼԻՆԻ՝ տրիբունի վրա յերևալը դիմա-  
լորվում է ամբողջ դահլիճի յերկարան։ Վոքորկալի  
ուղացիայով։ Ամբողջ դահլիճը վուտքի յի կանգնում։  
Բայոր կողմերից հեշում են բացականչություններ։  
«Ռուա՛ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ»; «Կեցցե՛ ընկեր ՍՏԱԼԻ-  
ՆԻ», «Կեցցե՛ Մեծ ՍՏԱԼԻՆԸ», «Մեծ հանճար ընկեր  
ՍՏԱԼԻՆԻՆ ուռա՛», «Վի՛վատ», «Ռուս Փրո՛նտ»;  
«Փա՛ռք ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ»։

## I

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԿԱԶՄՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերություն:

Սահմանադրական Հանձնաժողովը, վորի նախագիծը ներկայացված է այս Համագումարի քննարկմանը, կազմվել է, ինչպես հայտնի յէ, ԽՍՀ Միության Խորհուրդների VII Համագումարի հատուկ վորոշման համաձայն։ Այդ վորոշումն ընդունվել է 1935 թվի վերջրվարի 6-ին։ Նա ասում է.

«1. ԽՍՀ Միության Սահմանադրության մեջ փոփոխություններ՝ մտցնել հետեւյալ ուղղությամբ։

ա) ընտրական սխառեմի հետագա գեմոկրատացման՝ վոչ լիովին հավասար ընտրությունները հավասար ընտրություններով փոխարինելու իմաստով, բազմաստիճան ընտրություններն՝ ուղղակի ընտրություններով, բաց ընտրությունները՝ փակ ընտրություններով փոխարինելու իմաստով։

բ) Սահմանադրության սոցիալ – տնտեսական հիմքը ճշգրտելու ուղղությամբ՝ Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի գասակարգային ուժերի այժմյան վոխհարաբերությունների հետ համապատասխա-

այս իմաստով՝ (նոր սոցիալիստական ինդուստրիալի ստեղծումը, կուլտակության զախշախումը, գործնաբառային կարգերի հաղթությունը, սոցիալիստական սեփականության՝ վորպես խորհրդային հասարակության հիմքի՝ հաստատումը և այլն):

2. Առաջարկել ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին՝ ընտրել Սահմանադրական Հանձնաժողով, վորին Հանձնարարել առաջին կետում մատնանշված հիմունքներով՝ մշտեկել Սահմանադրության ուղղված տեքստը և ներկայացնել այն ԽՍՀ Միության Կենտրոնական Նստավորական ինքնականացման մասին:

3. ԽՍՀ Միության մեջ խորհրդային իշխանության մարմինների մոտակա հերթական ընտրությունները կտարարել նոր ընտրական սփառեմի հիման վրա:

Այս 1935 թվի փետրվարի 6-ին եր՝ Այս վորոշումն ընդունելուց մի որ հետո, այսինքն՝ 1935 թվի փետրվարի 7-ին, հավաքվեց ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Առաջին Նստավորականը և, ի կատարումն ԽՍՀՄ-ի Խորհուրդների VII Համագումարի վորոշման, կազմեց 31 հոգուց բաղկացած Սահմանադրական Հանձնաժողով։ Նա հանձնարարեց Սահմանադրական Հանձնաժողովին մշտեկել ԽՍՀՄ-ի ուղղված Սահմանադրության նախադիմական համարին։

Սրանք են այն ձևական հիմունքները և ԽՍՀՄ-ի գերազույն մարմնի ղերեկարիվները, վորոնց հիման վրա իր աշխատանքը պետք է ծավալեր Սահմանադրական Հանձնաժողովը։

Այսպիսով, Սահմանադրական Հանձնաժողովը պետք է փոփոխություններ մատներ 1924 թվին ընդունված՝ այժմ գործող Սահմանադրության մեջ, ընդունին հաջվի առնելով սոցիալիզմի ուղղությամբ կատարված այն տեղաշարժերը ԽՍՀ Միության կյանքի մեջ, վորոնք իրականացվել են 1924 թվից մինչեւ մեր որերն ընկած ժամանակաշրջանում։

1924 թվից ՄԻՆՉԵՎ 1936 ԹԻՎՆ ԸՆԱՌ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԽՍՀՄ-Ի  
ԿՅԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՌ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Վ**որո՞նք են ԽՍՀՄ-ի կյանքում տեղի ունեցած այն փոփոխությունները, վոր իրազործվեցին 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակաշրջանում և վորո՞նք պետք է արտացոլեր Սահմանադրական Հանձնաժողովը Սահմանադրության իր նախագծում։

Վո՞րն է այդ փոփոխությունների եյությունը։

Ի՞նչ ունեյինք մենք 1924 թվին։

Դա ՆԵՊ-ի առաջին շրջանն էր, յերբ Խորհրդային իշխանությունը թույլ տվեց կապիտալիզմի վորոշ աշխուժացում՝ սոցիալիզմի ըստ ամենայնի գարգացման հետ միասին, յերբ Խորհրդային իշխանությունը նկատի ուներ տնտեսության յերկու սիստեմների՝ կապիտալիստականի և սոցիալիստականի՝ մրցության ընթացքում կազմակերպել սոցիալիստական սիստեմի գերակշռությունը կապիտալիստականի հանդեպ։ Խընդիրն այն էր, վոր այդ մրցության ընթացքում ամրացնելինք սոցիալիզմի դիրքերը, հասնելինք կապիտալիստական տարրերի վերացմանը և ավարտելինք սոցիալիստական սիստեմի՝ վորպես ժողովրդական տնտեսության հիմնական սիստեմի՝ հաղթությունը։

Մեր արդյունաբերությունը, առանձնապես ծանր արդյունաբերությունը, այն ժամանակ աննախանձելի պատկեր էր ներկայացնում։ Ճիշտ է, նու քիչ առ քիչ վերականգնվում էր, բայց դեռ շատ հեռու յեր իր արտադրանքը նախապատերազմյան մակարդակին հասցնելուց։ Նու հիմնվում էր հին, հետամնաց և վոչ-հարուստ տեխնիկայի վրա։ Իհարկե, նու զարգանում եր գեղի սոցիալիզմը։ Մեր արդյունաբերության սոցիալիստական հատվածի տեսակարար կշիռն այն ժամանակ կազմում էր մոտավորապես 80 տոկոս։ Բայց կապիտալիզմի հատվածն, այնուամենայնիվ, իր կողմն ուներ արդյունաբերության վոչ պակաս քան 20 տոկոս։

Մեր գյուղատնտեսությունն ե'լ ավելի անհրապույր պատկեր էր ներկայացնում։ Ճիշտ է, կարվածատերերի գասակարգն արգեն վերացված էր, բայց դրա փոխարեն գյուղատնտեսական կապիտալիստների գասակարգը, կուլակների գասակարգը, դեռևս բավական նշանակալից ուժ էր ներկայացնում։ Ամբողջությամբ առած՝ գյուղատնտեսությունն այն ժամանակ հիշեցնում էր անհատական գյուղացիական մանր տընտեսությունների մի անձայրածիր ովկիանոս՝ իրենց հետամնաց միջնագարյան տեխնիկայով։ Այդ ովկիանոսում իրեւ առանձին կետեր ու փոքրիկ կղզիներ գոյություն ունեյին կոլտնտեսություններ և խորհանակառություններ, վորո՞նք, խկապես ասած, մեր ժողովրդական անտեսության մեջ դեռևս փոքրիչատե լուրջ նշանակություն չունեյին։ Կոլտնտեսություններն ու խորհանակառությունները թույլ եյին, իսկ կուլակը գեռես պահպանում էր իր ուժը։ Այն ժամանակ մենք

խոսում ելինք վո՛չ թե կուլակության վերացման, այլ նրա սահմանափակման մասին:

Նույնը պետք է տսել նաև ապրանքաշրջանառության մասին յերկրում: Ապրանքաշրջանառության մեջ սոցիալիստական հատվածը կազմում եր ինչպոք 50—60 տոկոս, —վոչ ավելի, իսկ ամբողջ մնացած առարկեզր դրաված եր վաճառականների, սպեկուլանտների և այլ մասնավորների կողմից:

Այս եր մեր հեղոնոմիկայի պատկերը 1924 թվականին:

Ի՞նչ ունենք մենք այժմ, 1936 թվականին:

Յեթե այն ժամանակ մենք ունեյինք ՆԵՊ-ի տուազին ժամանակաշրջանը, ՆԵՊ-ի սկիզբը, կապիտալիզմի վորոշ աշխուժացման ժամանակաշրջանը, ասկա այժմ մենք ունենք ՆԵՊ-ի վերջին ժամանակաշրջանը, ՆԵՊ-ի վարչանը, կապիտալիզմի մասկատար վերացման ժամանակաշրջանը՝ ժողովրդական տնտեսության բոլոր վորատներում:

Սկսենք թեկուզ նրանից, վոր այդ ժամանակաշրջանում մեր արդյունաբերությունն աճեց, դարձավ մի վիթխարի ուժ: Այժմ արդեն չի կարելի այն թույլ և տեխնիկապես վատ զինված անվանել: Ընդհակառակը, այն հիմնված է այժմ նոր, ժամանակակից հարուստ տեխնիկայի վրա՝ ուժեղ կերպով զարգացած ծանր ինդուստրիայով և ել ավելի զարգացած մեքենաշինությամբ: Իսկ ամենից գլխավորն այն է, վոր կապիտալիզմն իսպառ վտարված է մեր արդյունաբերությունն վոլորտից, իսկ արտադրության սոցիալիստական մենայթման անբաժանելիորեն տիրապետությունը ամրապնդված է գիտական ավելի քան 400 հազար տրակտոր՝ 7.580.000 ձիու ուժի կարողությամբ:

Զի կարելի մտնելունք համարել այն վաստը, վոր մեր այժմյան սոցիալիստական ինդուստրիան, արտադրանքի ծավալի տեսակետից, ավելի քան յոթն անգամ զերաշանցում է մինչպատերազմյան ժամանակի ինդուստրիայից:

Գյուղատնտեսության բնագավառում մանր անհատական գյուղացիական տնտեսությունների ովկիանոսի վոխարեն՝ նրանց թույլ տեխնիկայով և կուլակի գերութությամբ՝ այժմ մենք ունենք աշխարհիս ամենախոշոր մեքենաշրջանը, նոր տեխնիկայով զինված մի արտադրություն՝ կոլտնտեսությունների ու խորհարնտեսությունների համայնապարփակ սիստեմի ձևով: Բոլորին հայտնի յե, վոր կուլակությունը գյուղատքնետեսության մեջ վերացված է, իսկ գյուղացիական մանր անհատական անտեսությունների հատվածը՝ նրա հետամնաց միջնագարյան տեխնիկայով՝ այժմ աննշան տեղ է զրավում, ընդուրում նրա տեսակարար կշփորդյանական տեսության մեջ՝ ցանքի տարածության չափի իմաստով՝ 2—3 տոկոսից ավելի չի կազմում: Զի կարելի չնչել այն վաստը, վոր այժմ կոլտնտեսություններն իրենց տրամադրության տակ ունեն 316 հազար տրակտոր՝ 5.700.000 ձիու ուժի կարողությամբ, իսկ խորհանտեսությունների հետ միասին ունեն ավելի քան 400 հազար տրակտոր՝ 7.580.000 ձիու ուժի կարողությամբ:

Ինչ վերաբերում է ապրանքաշրջանառությանը՝ յերկրում, ապա վաճառականներն ու սպեկուլանտներն իսպառ վտարված են այդ բնագավառից: Այժմ ամբողջ ապրանքաշրջանառությունը զանվում է պետությանը՝ կոոպերացիայի և կոլտնտեսությունների ձևոքում:

ծնունդ առավ ու զարգացավ նոր, խորհրդային առետուրը, առևտուր առանց սպեկուլանաների, առևտուր առանց կապիտալիստների:

Այսպիսով, սոցիալիստական սիստեմի լիակատար Հաղթությունը ժողովրդական տնտեսության բոլոր վորոտներում այժմ փաստ է:

Իսկ ի՞նչ են նշանակում այս:

Այս նշանակում են, վոր մարդու շահագործումը մարդու կողմից՝ վոչնչացված են, վերացված են, իսկ արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը հաստատված են վորպիս մեր խորհրդային հասարակության անսասան հիմքը: (Յերկարամ ծափահարություններ):

Վոլոպես արդյունք ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության բնագավառում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխությունների՝ այժմ մենք ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չդիմաժամեր ու գործադրելություն, չգիտե աղքատություն ու քայլքայում՝ և վորը տալիս ե քաղաքացիներին բոլոր հնարավորություններն ունենոր ու կուլտուրական կյանքի համար:

Սրանք են հիմնականում այն փոփոխությունները, վորոնք տեղի ունեցան մեր եկոնոմիկայի բնագավառում 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակամիջոցում:

ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի բնագավառում տեղի ունեցած այդ փոփոխություններին համապատասխան՝ փոխվեց նույն մեր հասարակության դասակարգային կառուցվածքը:

Կարգածտաերերի դասակարգը, ինչպես հայտնի արդեն վերացված էր քաղաքացիական պատերազմում:

Ճի հաղթական ավարտման հետևանքով՝ ինչ վերաբերում են մյուս շահագործող դասակարգերին, ապա նրանց ել բաժին ընկալ կալվածատերերի դասակարգի բախտը: Զետ այլևս կապիտալիստների դասակարգը արդյունաբերության բնագավառում: Զետ այլևս կուլտուրների դասակարգը զյուղատնտեսության բնագավառում: Զետն այլևս վաճառականներն ու սպակուլարներն ապրանքաշրջանառության բնագավառում: Այդպիսով, բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին:

Մնաց բանվոր դասակարգը:

Մնաց գյուղացիների դասակարգը:

Մնաց ինտելիգենցիան:

Բայց սիալ կլիներ կարծել, վոր այս սոցիալական խմբերն այդ ժամանակամիջոցում վոչ ճի փոփոխություն չկը հցին, վոր նրանք մնացին այնպես, ինչպես օրելին, տանք, կապիտալիզմի ժամանակաշրջանում:

Դ Վերցնենք, որինակ, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը: Հատ հին հիշողություն՝ նրան հաճախ կոչում են պրոլետարիատ: Բայց ի՞նչ ե պրոլետարիատը: Պրոլետարիատը մի դասակարգ ե, վոր զրկված ե արտադրության գործիքներից ու միջոցներից, անտեսության մի այնպիսի սիստեմի ժամանակ, յերբ արտադրության դործիքներն ու միջոցները պատկանում են կապիտալիստներին և յերբ կապիտալիստների դասակարգը շահոգործում ե պրոլետարիատին: Պրոլետարիատը՝ դասակարտալիստների կողմից շահագործվող դասակարգն է: Բայց մեզ մոտ, ինչպես հայտնի յե, կապիտալիստների դասակարգն արդեն վերացված ե, արտադրության գործիքների խրված են կապիտա-

իիստների ձեռքից և հանձնված պետությանը, վորի զեկավար ուժը հանդիսանում է բանվոր գասակարգը։ Հետեւարար, չկա այլեւ կապիտալիստների գասակարգը, վորը կարողանար շահագործել բանվոր գասակարգին։ Հետեւարար, մեր բանվոր գասակարգը վոչ միայն զրկված չե արտադրության գործիքներից ու միջոցներից, այլ, ընդհակառակը, նա գրանց տերն է ամբողջ ժողովրդի հետ միասին։ Յեվ քանի վոր նա գրանց տերն է, իսկ կապիտալիստների գասակարգը վերացված է, — բացառված է բանվոր գասակարգի շահագործման ամեն մի հնարավորություն։ Կարելի՞ յե արդ զյոք զրանից հետ մեր բանվոր գասակարգը պրոլետարիատ անվանել։ Պարզ է, վոր չի կարելի։ Մարքսն սոսում եր, վորպեսզի պրոլետարիատն աղասագը իրեն, նա պետք է ջախջախի կապիտալիստների գասակարգը, իսկի կապիտալիստներից արտադրության գործիքներն ու միջոցները և վոչնչացնի արտադրության այն պայմանները, վորոնք պրոլետարիատ են ծնում։ Արդյոք կարելի՞ յե ասել, վոր ԽՍՀՄ-ի բանվոր գասակարգն արգեն իրականացրել է իր ազատագրման այդ պայմանները։ Անպայման կարելի յե և պետք է ասել։ Իսկ այդ ի՞նչ են նշանակում։ Այդ նշանակում է, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը փոխարկվել է միանդամայն մի նոր գասակարգի, ԽՍՀՄ-ի բանվոր գասակարգի։ Վորը վոչնչացը է անակառության կապիտալիստական սփոտեմը, հասաւատել է արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը և առնում է խորհրդային հասարակությունը կոմունիզմի ուղիղութ։

Ինչուս տեսնում եք, ԽՍՀՄ-ի բանվոր գասակարգը

որ—ուս մի բոլորովին նոր, շահագործությոց աղասակավածքը բանվոր գասակարգ է, վորի նմանը մարդկություն ողառմությունը դեռ չի իմացել։

Անցնենք գյուղացիության հորցին։ Մոլորաբար ընդունված է ասել, թե գյուղացիությունը—դա մանր արտադրողների մի այնպիսի դասակարգ է, վորի անդամներն ատամացված են, ցիրուցան յեղած ամբողջ յերկրի յերեսին, անհատաբար փորբում են հետամնաց տեխնիկա ունեցող իրենց մանր տնտեսություններում, մասնավոր սեփականության ստրուկներ են և անպատճե կերպով շահագործվում են կարվածատերերի, կուլակների, վաճառականների, սպեկուլանտների, գաշխառուների կողմից և այլն։ Յեվ իրոք, գյուղացիությունը կապիտալիստական յերկիրներում, յեթե նկատի ունենանք նրա հիմնական մասսան, հենց այդպիսի դասակարգ է հանդիսանում։ Արդյոք կարելի՞ յե ասել, թե մեր արգի գյուղացիությունը, խորհրդային գյուղացիությունը՝ իր մասսայով առած՝ նման եալդպիսի գյուղացիության։ Վո՛չ, այդ չի կարելի ասել։ Այդպիսի գյուղացիություն մեզ մոտ արդեն չկա։ Մեր խորհրդային գյուղացիությունը միանդամայն նոր գյուղացիություն է։ Մենք այլևս չունենք կարվածատերեր ու կուլակներ, վաճառականներ ու վաշխառուներ, վորոնք կարողանային շահագործել գյուղացիներին։ Հետեւարար, մեր գյուղացիությունը շահագործութիւնը աղատագրիած գյուղացիություն է։ Այսուհետեւ, մեր խորհրդային գյուղացիությունն իր ճնշող միջամասնությամբ կոլտնտեսային գյուղացիություն է, այսինքն՝ նա իր աշխատանքն և իր ստացվածքը հիմնում է վո՛չ թե անհատական աշխատանքի ու հե-

տամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ աշխատանքի և արդի տեխնիկայի վրա։ Վերջապես, մեր գյուղացիության տնտեսության հիմքում դանվում է վո՛չ թե մասնավոր սեփականությունը, այլ կոլեկտիվ սեփականությունը, վորն աճել է կոլեկտիվ աշխատանքի բազայի վրա։

Ինչպես տեսնում եք, խորհրդային գյուղացիությունը — դա միանգամայն նոր գյուղացիություն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկության պատմությունը։

Անցնենք, վերջապես, ինտելիգենցիայի հարցին, ինժեներ-տեխնիկական աշխատողների, կուլտուրական ձակատի աշխատողների, ընդհանրապես ծառայողների և այլոց հարցին։ Ինտելիգենցիան նույնպես մեծ փոփոխություններ է կրել անցած ժամանակաշրջանում։ Այդ արդեն այն հին, կոչտապատած ինտելիգենցիան չե, վորը փորձում եր գասակարգերից վեր դասել իրեն, բայց իսկապես՝ իր մասսայով առած՝ ծառայում եր կալվածատերերին ու կապիտալիստներին։ Մեր խորհրդացին ինտելիգենցիան — դա միանգամայն նոր ինտելիգենցիա յե, վորը, բոլոր արմատներով կապված է բանվոր գասակարգի ու գյուղացիության հետ։ Փոխվել ե, նախ՝ ինտելիգենցիայի կազմը։ Ազնվականությունից և բուրժուազիայից յելածները կազմում են մեր խորհրդացին ինտելիգենցիայի փոքր տոկոսը։ Խորհրդացին ինտելիգենցիայի 80—90 տոկոսը — դա բանվոր գասակարգից, գյուղացիությունից և աշխատավորության այլ չերտերից յելածներն են։ Փոխվել ե, վերջապես, ինտելիգենցիայի գործունեյության նաև բուն իսկ բնույթը։ Առաջ նոր պետք է ծառայեր հարուստ

դաստկարգերին, վորովհետեւ նրա համար այլ յելք չկար։ Այժմ նա պետք է ծառայի ժողովրդին, վորովհետեւ շահագործող դաստկարգերն այլևս չկան։ Յեվհենց այդ պատճառով այժմ նա իրավահամար անդամ է խորհրդացին հասարակության, վորակդ նարանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում է նոր անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը։

Ինչպես տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիային չե, վորի նմանը չեք գտնի յերկրագնդի վոչ մի յերկրում։

Սրանք են այն փոփոխությունները, վորոնք կատարվել են անցած ժամանակաշրջանում՝ խորհրդացին հասարակության դաստկարգացին կառուցվածքի բնագավառում։

Ինչի՞ մասին են խոսում այդ փոփոխությունները։

Նախ՝ նրանք ասում են այն, վոր սահմանագծերը բանվոր դաստկարգի և գյուղացիության միջև, ինչպես նաև այդ դաստկարգերի ու ինտելիգենցիայի մեջի, ջնջվում են, իսկ դաստկարգացին հին բացառիկությունը անհետանում է։ Այդ նշանակում է, վոր տարածությունն այդ յերկու սոցիալական խմբերի միջև ավելի ու ավելի կրծատվում է։

Յերկրորդ՝ նրանք ասում են այն, վոր տնտեսական հակասություններն այդ սոցիալական խմբերի միջև՝ ընկնում են, ջնջվում են։

Վերջապես, նրանք ասում են այն, վոր ընկնում ու ջնջվում են նաև քաղաքական հակասությունները նրանց միջև։

Այսպես և բանը ԽՍՀՄ-ի դաստկարգացին կառուց-

վածքի բնադրավառում աեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ:

ԽՍՀՄ-ի հանրակական կյանքում կառարված փոփոխությունների ուսումնական լրիվ չեր լինի, յեթե մի քանի խոսք չասելինք մի բնադրավառում ևս կառարված փոփոխությունների մասին։ Յես նկատի ունեմ ազգային փոխարարերությունների բնադրավառը ԽՍՀՄիությունում։ Ինչողես հայտնի յէ, Խորհրդային Միության մեջ մտնում են մոտ վաթուն ազգ, ազգային խմբեր ու ժողովուրդներ։ Խորհրդային պետությունը բազմազդ պետություն և Հանրահանալի յէ, վոր ԽՍՀՄիության ժողովուրդների փոխարարերությունների հարցը չի կարող առաջնակարգ նշանակություն չունենալ մեղ համար։

Ինչպես հայտնի յէ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կազմվել է 1922 թվականին՝ ԽՍՀՄ-ի Խորհուրդների Առաջին Համազումարում։ Նու կազմվել է ԽՍՀՄ-ի ժողովուրդների հավասարության ու կամավորության սկզբունքներով։ Այժմ գործող Սահմանադրությունը, վորն ընդունվել էր 1924 թվականին, ԽՍՀ Միության առաջին Սահմանադրությունն և։ Դա այն ժամանակաշրջանն էր, յերբ Հարաբերությունները ժողովուրդների միջև զեռ ինչու պետ հարկն է չելին կարդավորված, յերբ վելի կոռուպտների հանդեպ ցուցարերվող անվտանգության մնացուկները դեռ չելին անհետացել, յերբ կենարունախույզ ու ժերը դեռևս շարունակում էին գործել։ Հարկավոր երարդ պայմաններում կարգավորել ժողովուրդների յեղարական համագործակցությունը՝ անտեսական, քաղաքական ու ռազմական փոխադրամ ոգնության հի-

ման վրա, միացնելով նրանց, վարպետ միութենական բազմազդ պետություն։ Խորհրդային իշխանությունը չեր կարող չտեսնել այդ գործի դժվարությունները։ Նա ուներ իր առջև բազմազդ պետությունների անհաջող փորձները բուրժուական յերկիրներում։ Նա ուներ իր առջև հին Ավոտրո-Հունդարիայի տապալված փորձը։ Յեզ, այնուամենայնիվ, նա դիմեց բազմազդ պետություն ստեղծելու փորձին, վորովհետև նա դիմեր, վոր սոցիալիզմի հիմքի վրա տառաջացած բազմազդ պետությունը պետք է դիմանար բոլոր ու ամեն տեսակ փորձություններին։

Այդ ժամանակից անցել է 14 տարի։ Մի ժամանակաշրջան, վորը բավական և վորձն ստուգելու համար։ Յեզ ի՞նչ։ Անցած ժամանակաշրջանն անտարակուելիութեան ցույց տվեց, վոր սոցիալիզմի հիմքի վրա ստեղծված բազմազդ պետություն կազմելու փորձը իրովին հաջողվել է։ Դա լինին յան ազգային քաղաքականության անկասկածելի հաղթությունն և։ (Յերկարանի ծափակարություններ)։

Ինչո՞վ բացատրել այս հաղթությունը։

Ազգամիջյան կոփիների հիմնական կազմակերպիչներ հանդիսացող շահագործող դասակարգերի բացակայությունը, փոխադրամ անվաստահություն մշակող և աղդայնական կրքեր բորբոքող շահագործման բացակայությունը, բանվոր դասակարգի՝ իշխանության դլուխ լինելը, մի դասակարգ, վորը հանդիսանում է ամեն տեսակ ստրկացման թշնամի և ինսերնացիկունալիզմի գաղափարների հավատարիմ կրող։ Ժողովուրդաների փոխադրամ սղնության իրական կենսադրությունը տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր ասպա-

բեզներում. վերջապես, ԽՍՀՄ-ի ժողովուրդների աղ-  
ղային կուլտուրայի ծաղկումը՝ ազգային ըստ ձևի և  
սոցիալիստական ըստ բովանդակության,—այս բոլորը  
և սրանց նման գործոնները հասցըին այն բանին, վոր  
արմատապես փոխվեց ԽՍՀՄ-ի ժողովուրդների կեր-  
պարանքը, անհայտացավ նրանց միջից փոխադարձ  
անվատահության զգացմունքը, զարգացավ նրանց մեջ  
փոխադարձ բարեկամության զգացմունքը և այդպիսով  
կարգավորվեց ժողովուրդների իսկական յեղբայրական  
համագործակցությունը՝ միասնական միութենական  
պետության սիստեմում:

Իբրև արգյունք մենք ունենք այժմ միանդամայն  
կազմավորված և բոլոր փորձություններին զիմացած  
բազմազգ սոցիալիստական պետություն, վորի ամ-  
րությանը կարող եր նախանձել ամեն մի ազգային պե-  
տություն աշխարհի ամեն մի մասում: (Բուռն ծափա-  
հարություններ):

Սրանք են այն փոփոխությունները, վորոնք տեղի  
յեն ունեցել ԽՍՀՄ-ում անցած ժամանակաշրջանում,  
ազգային փոխհարաբերությունների առաջարեղում:

Այս և 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամա-  
նակաշրջանում ԽՍՀՄ-ի անտեսական ու հասարակա-  
կան-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխու-  
թյունների ընդհանուր հանրագումարը:

### III

#### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դ՞նչ արտացոլում են ստացել ԽՍՀՄ-ի կյանքում տե-  
ղի ունեցած այդ բոլոր փոփոխությունները նոր Սահ-  
մանադրության նախադարձում:

Այլ կերպ առած՝ վորոնք են այս Համագումարի  
քննությանը ներկայացված Սահմանադրության նա-  
խագծի հիմնական առանձնահատկությունները:

Սահմանադրական Հանձնաժողովին հանձնարար-  
ված եր փոփոխություններ մայնել 1924 թվականի  
Սահմանադրության տեքստում: Վորպես Սահմանա-  
դրական հանձնաժողովի աշխատանքի արդյունք ստաց-  
վեց Սահմանադրության նոր տեքստ, ԽՍՀՄ-ի նոր  
Սահմանադրության նախագիծը: Սահմանադրական  
Հանձնաժողովը, նոր Սահմանադրության նախագիծը  
կազմելիս, յելակետ ե ունեցել այն, վոր սահմանա-  
դրությունը չպետք է շփոթել ծրագրի հետ: Այդ նշա-  
նակում ե, վոր ծրագրի ու սահմանադրության միջե-  
երական տարբերություն կա: Մինչդեռ ծրագիրը իո-  
սում է այն բանի մասին, ինչ վոր զեռ չկա և ինչ վոր  
զեռ պետք է ձեռք բերվի ու նվաճվի առաջարկում,  
սահմանադրությունն, ընդհակառած, պետք ե խոսի

այն բանի մասէն, ինչ վոր արդեն կա, ինչ վոր արդեն  
ձեռք և բերված ու նվաճված ե այժմ, ներկայումս  
Ծրագիրը վերաբերում ե գլխավորապես ապագային,  
սահմանադրությունը՝ ներկային:

Յերկու որինակ՝ լուսարանության համար:

Մեր խորհրդային հասարակությունը հասավ այն  
բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց  
սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակա-  
կարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ վոր մարք-  
սիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առա-  
ջին կամ ստորին փուլ: Նշանակում ե՝ մեղ մոտ արդեն  
հիմնականում իրականացված ե կոմունիզմի առաջին  
փուլը՝ սոցիալիզմը: (Յերկարանե ծափահարություններ): Կոմունիզմի այդ փուլի հիմնական սկզբունքն ե,  
ինչպես հայտնի յէ, հետեւյալ ֆորմուլան, «յուրաքան-  
չյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքան-  
չյուրին՝ ըստ նրա աշխատանքի»: Արդյոք մեր Սահ-  
մանադրությունը պե՞տք ե արտացոլի այդ միաստր,  
սոցիալիզմի նվաճման փաստը: Նո պե՞տք ե արդյոք  
հիմնվի այդ նվաճման վրա: Անզայման պետք ե հիմ-  
նվի: Պետք ե, վորովհետեւ սոցիալիզմը ԽՍՀՄ-ի հա-  
մար այն ե, ինչ վոր արդեն ձեռք և բերվել ե նվաճ-  
մել:

Բայց խորհրդային հասարակությունը դեռ չի հա-  
սել կոմունիզմի բարձրագույն փուլի իրականացմանը,  
վորտեղ տիրապետող սկզբունքն ե լինելու հետեւյալ  
ֆորմուլան, «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակու-  
թյունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջ-  
մունքների», թեզեւ ե նա իր առջև նպատակ ե դրել  
հասնել ապագայում կոմունիզմի բարձրագույն փուլի

իրականացմանը: Կարո՞ղ ե արդյոք մեր Սահմանա-  
դրությունը հիմնվել կոմունիզմի բարձրագույն փուլի  
վրա, վորը դեռ չկա և վարը դեռ պետք ե նվաճմի:   
Վո՞չ, չի կարող, վորովհետեւ կոմունիզմի բարձրա-  
գույն փուլը ԽՍՀՄ-ի համար այն ե, ինչ վոր դեռ չի  
իրականացված և ինչ վոր պետք ե իրականացմի ապա-  
գայում: Չի կարող, յիթե նա չի ուզում ապագա նվա-  
ճումների ծրագրի կամ գեկլարացիայի վերածվել:

Սրանք են մեր Սահմանադրության շրջանակները  
ամենալ պահանջան մասենաւմ:

Այդպիսով, նոր Սահմանադրության նախագիծը  
ներկայացնում ե անյած ուղար արգյաւնքը, արդեն  
ձեռք բերված նվաճմուների արգյաւնքը: Հետեւար,  
նա հանդիսանում ե գրանցումն ու որենսդրական ամ-  
պապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք և բեր-  
ված ու նվաճված իրականում: (Բուռն ծափահարու-  
թյուններ):

Այս ե ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագծի  
առաջին առանձնահատկությունը:

Այնուհետեւ: Բուրժուական յերկիրների սահմանա-  
դրությունները սովորաբար յելնում են կապիտալիս-  
տական հասարակակարգի անստան լինելու համար-  
մունքից: Այդ սահմանադրությունների գլխավոր հիմ-  
քըն են կազմում կապիտալիզմի սկզբունքները, նրա  
գլխավոր հիմունքները—հողի, անտառների, Փարքի-  
կանների, գործարանների և արտադրության այլ գոր-  
ծիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը,  
մարդու շահագործումը մարդու կողմից և շահագոր-  
ծողների ու շահագործվողների առկայությունը. աշ-  
խատավոր մեծամասնության ապահովված չինելը հա-

սարակության մեկ ըևեռում և չաշխատող, բայց ապագահովված փոքրամասնության ճոխությունը մյուս ըևեռում և այլն և այլն: Նրանք հենվում են կապիտալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նրանք արտացոլում են այս ամենը, նրանք որենսդրական կարգով ամրապնդում են այս բոլորը:

Ի տարբերություն դրանցից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը յենում է կապիտալիստական կարգերի վերացման փաստից, ԽՍՀՄ-ում սոցիալիստական կարգերի հաղթության փաստից: ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագծի գլխավոր հիմքը կազմում են սոցիալիզմի սկզբունքները, սրա գլխավոր հիմունքները, վորոնք արգեն նվաճված և իրականացված են—հողի, անտառների, Փարբիկաների, գործարանների և արտադրության այլ գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը. շահագործման ու շահագործող գասակարգերի վերացումը. մեծամասնության աղքատության և փոքրամասնության ճոխության վերացումը. գործադրկության վերացումը. աշխատանքը՝ վորպես յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականություն և պատվի պարտք՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» Փորմուլայի համաձայն: Աշխատանքի իրավունքը, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու վերաբերյալ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը, հանգստի իրավունքը, կրթության իրավունքը և այլն և այլն: Նոր Սահմանադրության նախագիծը հենվում է սոցիալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նա արտացոլում է այդ հիմունքները, նա որենսդրական կարգով ամրապնդում է գըրանք:

Այս և նոր Սահմանադրության նախագծի յերկրորդ առանձնահատկությունը:

Այնուհետեւ: Բուրժուական սահմանադրությունները լուելցան յենում են այն նախադրյալից, վոր հասարակությունը բաղկացած է հակամարտ դասակարգերից, հարստության տեր դասակարգերից և հարըստություն չունեցող դասակարգերից, վոր ինչ կուսակցություններ ել իշխանության գլուխ անցնի, հասարակության պետական զեկավարությունը (գիլտատուրան) պետք է պատկանի բուրժուազիային, վոր սահմանադրությունը հարկավոր է ունենոր դասակարգերին հաճելի ու ձեռնտու հասարակական կարգերն ամրապնդելու համար:

Ի տարբերություն բուրժուական սահմանադրություններից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը յենում է այն բանից, վոր հասարակության մեջ այլևս հակամարտ դասակարգեր չկան, վոր հասարակությունը բաղկացած է յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վոր իշխանության գլուխ են կանգնած հենց այդ աշխատավորական դասակարգերը, վոր հասարակության պետական զեկավարությունը (գիլտատուրան) պատկանում է բանվոր դասակարգին՝ վորպես հասարակության առաջավոր դասակարգի, վոր Սահմանադրությունը հարկավոր է նրա համար, վորպեսզի ամրապնդենք աշխատավորությանը ցանկալի և ձեռնտու հասարակական կարգերը:

Այս և նոր Սահմանադրության նախագծի յերրորդ առանձնահատկությունը:

Այնուհետեւ: Բուրժուական սահմանադրություննե-

ըր լուելայն յեխում են այն նախաղբալից, վոր աղգերը և ուստաները չեն կարող իրավահավասար լինել, վոր կան լիիրավ աղգեր և վոչ-լիիրավ աղգեր, վոր, բացի դրանից, զոյսթյան ունի աղգերի կամ ուստաների նաև յերբորդ կատեղորիա, որինակ՝ դաղութներում, վորպնք ունեն եւ ավելի պակաս իրավունքներ, քան վոչ-լիիրավ աղգերը։ Այս նշանակում ե, վոր այդ բոլոր սահմանադրությաններին իրենց հիմքում նացիստական են, այսինքն՝ տիրապետող աղգերի սահմանադրություններ են։

Ի տարբերություն այդ սահմանադրություններից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախադիծը, ընդհակառակը, խորապես ինտերնացիոնալ ե։ Նա յեխում է այն բանից, վոր բարոր աղգերն ու ուստաներն իրավահավասար են։ Նա յեխում է այն բանից, վոր տարբերությունը մորթի դույնի կոմ լեզվի, կուլտուրական մակարդակի կամ պետական զարդացման մակարդակի միջև, ինչպես նաև վորեւ այլ տարբերություն աղգերի և ուստաների միջև—չի կարող հիմք ծառացել այն բանի համար, վորպեսզի արդարացվի աղգային անիրավահավասարությունը։ Նա յեխում է այն բանից, վոր բոլոր աղգերն ու ուստաները, անկախ նրանց անցյալ և ներկա դրությունից, անկախ նրանց ուժից ու թուլությունից,—պետք է ոգտվեն միատեսակ իրավունքներով հասարակության տնտեսական, հասարակական, պետական ու կուլտուրական կյանքի բոլոր վորություններում։

Այս է նոր Սահմանադրության նախազծի չորրորդ սուսնձնահատկությունը։

Նոր Սահմանադրության նախազծի հինգերորդ ա-

ռանձնահատկությունը նրա հետեւղական և մինչեւ վերջը պահպանված գեմոկրատիզմն է։ Դեմոկրատիզմի անուակետից բուրժուական սահմանադրությունները կարելի յեւ յերկու խմբի բաժանել. սահմանադրությունների մի խումբն ուղղակի ժխտում է կամ վաստորեն վոչնչի յեւ վերածում քաղաքացիների իրավունքների հավասարությունը և գեմոկրատական ազատությունները։ Սահմանադրությունների մյուս խումբը սիրով ընդունում է և մինչև անդամ ցուցադրում և դեմոկրատական սկզբունքները, բայց միաժամանակ այսպիսի վերապահումներ ու սահմանափակումներ ե անում, վոր գեմոկրատական իրավունքներն ու ազատությունները բոլորովին խեղաթյուրված են դուրս գալիս։ Նրանք խոսում են հավասար ընտրական իրավունքների մասին բոլոր քաղաքացիների համար, բայց տեղյուուեղը սահմանափակում են դրանք նոտակեցությամբ և կըթական ու նույնիսկ գույքային յենպով։ Նրանք խոսում են քաղաքացիների հավատուր իրավունքների մասին, բայց տեղյուուեղը վերտպահություն են անում, վոր այդ չի վերաբերում կոնսանց կոմ նրանց վերաբերում և մասամբ։ Յեկ այլն և այլն։

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախազծի առողջանահատկությունն այն է, վոր նա աղատ է այդպիսի վերտպահումներից ու սահմանափակումներից։ Նրա համար գոյություն չունեն ակտիվ կամ պաստիվ քաղաքացիներ, նրա համար բոլոր քաղաքացիներն ակտիվ են։ Նա տարբերություն չի ընդունում տղամարդկանց ու կանանց, «հստակյացների» ու «վոչ-նստակյացների», ունեորների ու չունեորների, կրթվածների ու վոչ-կրթվածների իրավունքների միջև։ Նրա համար

բոլոր քաղաքացիներն իրենց իրավունքներով հայլաստը  
են: Վո՞չ թե զույքային դրությունը, վո՞չ թե աղջա-  
յին ծագումը, վո՞չ թե սեռը, վո՞չ թե պաշտոնեական  
դրությունը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնա-  
կան ընդունակություններն ու անձնական աշխատանքն  
են վորոշում նրա դրությունը հասարակության մեջ:

Վերջապես, նոր Սահմանադրության նախագծի մի  
առանձնահատկությունն ես: Բուրժուական սահմանա-  
դրությունները սովորաբար սահմանավակվում են քա-  
ղաքացիների ձևական իրավունքների Փիքսացիայով,  
չհոգալով այդ իրավունքների կենսագործման պայման-  
ների մասին, նրանց կենսագործման հնարավորություն  
մասին, նրանց կենսագործման միջոցների մասին: Խո-  
սում են քաղաքացիների հավասարության մասին,  
բայց մոռանում են, վոր չի կարող իսկական հավասա-  
րություն լինել տիրոջ ու բանվորի միջև, կարլածա-  
տիրոջ ու գյուղացու միջև, յեթե առաջիններն ունեն  
հարստություն և քաղաքական կշիռ հասարակության  
մեջ, իսկ յերկրորդները զրկված են թե՛ մեկից և թե՛  
մյուսից, յեթե առաջինները շահագործողներ են, իսկ  
յերկրորդները՝ շահագործվողներ: Կամ զարձյալ՝ խո-  
սում են խոսքի, ժողովների և մամուլի ազատության  
մասին, բայց մոռանում են, վոր այդ բոլոր ազատու-  
թյունները կարող են բանվոր դասակարգի համար դա-  
տարկ հնչյունի վերածվել, յեթե նա զրկված է իր  
տրամադրության տակ ժողովների համար հարմար չեն-  
քեր, լավ տպարաններ, տպագրական թղթի բավակա-  
նոչափ քանակություն և այլն ունենալու հնարավորու-  
թյունից:

Նոր Սահմանադրության նախագծի առանձնահատ-

կությունն այն է, վոր նա չի սահմանափակվում քա-  
ղաքացիների ձևական իրավունքների Փիքսացիայով,  
այլ ծանրության կենտրոնը վոխաղքում է այդ իրա-  
վունքներն առահօվելու հարցի վրա, այդ իրավունք-  
ներն իրականացնելու միջոցների վրա: Նա վո՞չ թե  
սոսկ հոչակում է քաղաքացիների իրավունքների հա-  
վասարությունը, այլև ապահովում է այն՝ որենսդրա-  
կան կարգով հաստատելով չահագործման ռեժիմի վե-  
րացման վաստը, քաղաքացիների ամեն մի շահագոր-  
ծումից ազատազրվելու վաստը: Նա վո՞չ թե սոսկ  
հոչակում է աշխատանքի իրավունք, այլև ապահովում  
է այն՝ որենսդրական կարգով հաստատելով ճշնաժո-  
մերի բացակայության վաստը խորհրդային հասարա-  
կության մեջ, գործազրկության վոչնչացման վաստը: Նա  
վո՞չ թե սոսկ հոչակում է դեմոկրատական ազա-  
տություններ, այլև դրանք որենսդրական կարգով ա-  
պահովում է նյութական վորոշ միջոցներով: Ուստի  
հասկանալի յե, վոր նոր Սահմանադրության նախա-  
գծի դեմոկրատիզմը վո՞չ թե «սովորական» և «հանրա-  
հանաչ» դեմոկրատիզմ է ընդհանրապես, այլ սոցիա-  
լիստական դեմոկրատիզմ:

Սրանք են ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախա-  
գծի հիմնական առանձնահատկությունները:

Այսպես են արտացոլված նոր Սահմանադրության  
նախագծում ԽՍՀՄ-ի տնտեսական ու հասարակական-  
քաղաքական կյանքում տեղի ունեցած այն տեղաշար-  
ժերն ու փոփոխությունները, վորոնք իրականացվեցին  
1924 թվից մինչեւ 1936 թիվն ընկած ժամանակաշրջա-  
նում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ  
ԲՆԱԴՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա ի քանի խոսք Սահմանադրության նախագծի բուրժուական քննադատության մասին։

Այն հարցը, թե ի՞նչպես և վերաբերվում ոտարերկրյա բուրժուական մամուլը Սահմանադրության նախագծին, անվիճելիորեն վորոշ հետաքրքրություն և ներկայացնում։ Քանի վոր ոտարերկրյա մամուլն արտացոլում է բուրժուական յերկիրների բնակչության գանձագան խավերի հասարակական կարծիքը, մենք չենք կարող անցնել այն քննադատության կողքով, վոր ծավալեց այդ մամուլը Սահմանադրության նախագծի դեմ։

Սահմանադրության նախագծի նկատմամբ ոտարերկրյա մամուլի ցույց տված վերաբերմունքի տառաջն նշաններն արահաճայտվեցին վորոշ աենդենցով — լության մատնել Սահմանադրության նախագիծը։ Տվյալ զեկըում յես նկատի ունեմ ամենառեակցիոն, Փոշիստական մամուլը։ Քննադատների այդ խումբն ամենից լավ համարեց պարզապես լության մատնել Սահմանադրության նախագիծը, գործը պատկերացնել այնպես, թե կարծիս նախագիծ չի յեղել և ընդհանրա-

պես այն չկա բնության մեջ։ Կարող են ասել, թե լության մատնելը քննադատություն չե։ Բայց դա ճիշտ չե։ Լության մատնելու մեթոդը, վորպես անահետու հատուկ յեղանակ, նույնպես քննադատության մի ճեկ, ճիշտ է՝ հիմար ու ծիծաղելի, բայց և այնպես քրնակադատության ճե։ (Ընդհանուր ծիծաղ։ Ծափահարություններ)։ Սակայն լության մատնելու նրանց մեթոդից բան դուրս չեկավ։ Վերջիվերջո նրանք հարկադրված յեղան բանալ փակիչը և աշխարհին հազորդել, թե, վորքան ել այդ ցավալի լինի, այնուամենայնիվ ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախագիծը գոյություն ունի, և վո՛չ միայն գոյություն ունի, այլև սկսում են վնասակար ազգեցություն գործել մտքերի վրա։ Այլ կերպ չեր ել կարող լինել, վորովհետև աշխարհիս յերեսին այնուամենայնիվ կա մի ինչ-վոր հասարակական կարծիք, ընթերցողներ, կենդանի մարդկան, վորոնք ուզում են ճշմարտությունն իմանալ փառերի մտսին, և վոչ մի հնարավորություն չկա յերկար ժամանակ խարեւայության մամլիկի տակ պահել նրանց։ Խարեւայությամբ հեռու չես զնա...

Քննադատների յերկրորդ խումբն ընդունում է, վոր Սահմանադրության նախագիծն իրոք գոյություն ունի ընության մեջ, բայց նա զտնում է, վոր նախագիծը մեծ հետաքրքրություն չի ներկայացնում, վորովհետև նուրա եյության վո՛չ թե սահմանադրության նախագիծ է, այլ գատարկ թղթի կտոր, գատարկ խոստում, վորը նպատակ ունի վորոշ մանյովը անել ե. մարդկանց խարել։ Լուսվորում նրանք ավելացնում են, վոր ԽՍՀՄի ությունն ավելի լավ նախագիծ չեր ել կարող տալ, վորովհետև ԽՍՀՄ-ն ինքը վո՛չ թե պետություն ե, այլ

ընդամենն աշխարհագրական հասկացողություն (ընդհանուր ծիծաղ), խոկ քանի վոր նա պետություն չի հանդիսանում, ապա նրա սահմանագրությունն ել չի կարող իսկական սահմանագրություն լինել: Քննողատների այս խմբի տիպիկ ներկայացուցիչ ե հանդիսանում, վորքան ել այդ տարրինակ լինի, գերմանական սփիցիոզ «Դոյչե Գիպլոմատիչ-Պոլիտիչ Կորպորացիոնգը»: Այդ ժուռնալն ուղղակի առում ե, թե ի՞նչ Միության Սահմանագրության նախագիծը դատարկ խոստում ե, խարեյություն, «առոտյոմկինյան գյուղ»: Նա առանց տատանվելու հայտարարում ե, վոր ի՞նչ Միությունը պետություն չի հանդիսանում, վոր ի՞նչ Միությունը «ներկայացնում ե վոչ այլ ինչ, բայց յեթե ճշգրիտ կերպով վորոշվող աշխարհագրական հասկացողություն» (ընդհանուր ծիծաղ), վոր իՍՀՄ-ի Սահմանագրությունը, այդ պատճառով, չի կարող իսկական սահմանագրություն ճանաչվել:

Ի՞նչ կարելի յե ասել այդպիսի, թող ներվի ասել, քննադատների մասին:

Իր հեքիաթ-պատմվածքներից մեկի մեջ սուսական մեծ դրող Շչեգրինը տալիս ե շատ սահմանափակ ուրթամիտ, բայց չափազանց ինքնավստահ և տաքարյուն ըյորսկրատ սամողուր մարդու տիպը: Այն բանից հետո, յերբ այդ բյուրուկրատն իրեն «վատահացած» մարդում «կարդ ու անդորրություն» հաստատեց, բնաջինջ անելով հազարավոր բնակիչների և հրկիզելով տասնյակ քաղաքներ, նա նոյեց իր շուրջը և հորիզոնի վրա նկատեց Ամերիկան, մի յերկիր, վորն, իհարկե, քիչ ե հայտնի, վորտեղ, բոնից գուրս ե գալիս, վոր կան ժողովրդին չփոթեցնող ինչ-վոր ազատություններ և վոր-

տեղ պետությունն ուրիշ մեթոդներով են կառավարում: Բյուրոկրատը նկատեց Ամերիկան և վրուստվեց, այդ ի՞նչ յերկիր ե, վո՞րտեղից լույս ընկալ այն, այդ ի՞նչ հիման վրա յե, վոր դոյություն ունի այն: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ): Իհարկե, այդ յերկիրը պատահաբար հայտնագործել ելին մի քանի դար առաջ, բայց մի՞թե չի կարելի այն նորից ծածկել, վորպեսզի նրա հոսն անգամ չմնա: (Ընդհանուր ծիծաղ): Յեկ այս առելով՝ մակագրեց. «Նորից ծածկել Ամերիկան»: (Ընդհանուր ծիծաղ):

Ինձ թվում ե, վոր «Դոյչե Գիպլոմատիչ-Պոլիտիչ կորպեսպոնդենցի» պարոնները, ինչպես ջրի յերկու կաթիլ, նման են Շչեգրինի բյուրոկրատին: (Ընդհանուր ծիծաղ, հավանության ծափահարություններ): ԽՍՀ Միությունը վազուց ե այդ պարոնների աչքի փուշը դարձել: 19 տարի կանգնած ե ԽՍՀՄ-ն իրեն մի փառուս, ազատագրության շնչով վարակելով ամբողջ աշխարհի բանվոր դասակարգին և կատաղություն առաջցնելով բանվոր դասակարգի թշնամիների մեջ: Յեկ նա, այդ ԽՍՀՄ-ն, բանից գուրս ե գալիս, վո՞չ միայն պարզապես գոյություն ունի, այլ նույնիսկ աճում ե, և վո՞չ միայն աճում ե, այլ նույնիսկ բարզավաճում ե, և վո՞չ միայն բարզավաճում ե, այլ նույնիսկ հորինում ե նոր Սահմանագրության նախագիծ, մի նախագիծ, վորը մտքեր ե գրգռում, նոր հույսեր ե ներշնչում ձնչված դասակարգերին: (Ծափահարությաններ): Սրանից հետո ել ի՞նչպես չվրովվեն գերմանական սփիցիոզի պարոնները: Այդ ի՞նչ յերկիր ե, վայնասուն են բարձրացնում նրանք, այդ ի՞նչ հիման վրա յե, վոր զոյտություն ունի այն (ընդհանուր ծիծաղ), և յեթե

այն հայտնագործել են 1917 թվի հոկտեմբերին, ապա ինչո՞ւ չի կարելի այն նորից ծածկել, վորապեսզի նրա հոտն անդամ չմնա: Յեվ այս առելով վորոշեցին—նորից ծածկել ԽՍՀՄ-ն, հայտարարել իլուր ամենքի, վոր ԽՍՀՄ-ն, վորպես պետություն, զոյություն չունի, վոր ԽՍՀՄ-ն վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հասարակ աշխարհագրական հասկացողություն: (Ընդհանուր ծիծաղ):

Մակագրություն անելով, վորապեսզի նորից ծածկելի Ամերիկան, չչեղրինյան բյուրոկրատը, չնայելով իր ամբողջ բժամտությանը, այնուամենայնիվ գտավ իր մեջ իրականությունն ըմբռնելու տարրեր, աեղնուաեղն ասելով ինքն իրեն. «Բայց, կարծես թե, սույն այս բանն ինձնից չի կախված»: (Ուրախ ծիծաղի պոռքկում և բուռն ծափահարություններ): Յես չգիտեմ, գերմանական ոֆիցիոզի պարոնների խելքը կը հասնի՝ արդյոք գլխի ընկնելու, վոր թղթի վրա այս կամ այն պետությունը «ծածկել» նրանք, իհարկե, կարող են, բայց, յեթե լրջորեն խոսենք, ապա «սույն այս բանը նրանից չի կախված»... (Ուրախ ծիծաղի պոռքկում, բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում ե այն բանին, վոր ԽՍՀՄ-ի Սահմանադրությունն իրը թե հանդիսանում ե դատարկ խոսուում, «պոտյումկինյան գյուղ» և այլն, ապա յես կուզեյի վկայակոչել մի շարք հաստատված փաստեր, վորոնք իրենք են խոսում իրենց մասին:

1917 թվին ԽՍՀՄ-ի ժողովուրդները տապալեցին բուրժուազիային և հաստատեցին պրոլետարիատի զիկտատուրա, հաստատեցին Խորհրդային իշխանություն: Սա փաստ ե և վոչ թե խոսուում:

Ապա, Խորհրդային իշխանությունը վերացրեց կալվածատերերի գասակարգը և նախկին կալվածատերական, պետական ու վանքաղատեկան ավելի քան 150 միլիոն հեկտար հող հանձնեց գյուղացիներին, և այս բացի այն հողերից, վոր առաջներումն ել գյուղացիների ձեռքումն եյին դտնվում: Սա փաստ ե և վոչ թե խոսուում:

Ապա, Խորհրդային իշխանությունն եքսպլուատիացիայի յենթարկեց կապիտալիստների գասակարգը, խեց նրանցից բանկերը, գործարանները, յերկաթուղիները և արտադրության այլ գործիքներն ու միջոցները, գրանք սոցիալիստական սեփականություն հայտարարեց և այդ ձեռնարկությունների գլուխ կանգնեցրեց բանվոր գասակարգի լավագույն մարդկանց: Սա փաստ ե և վոչ թե խոսուում: (Յերկարանի ծափահարություններ):

Ապա, նոր սոցիալիստական հիմունքների վրա, նոր տեխնիկական բազայով կազմակերպելով արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը՝ Խորհրդային իշխանությունը հասալ այն բանին, վոր ներկայումս ԽՍՀՄ-ի հողագործությունը մեկ և կես անդամ ավելի արտադրանք ե տալիս, քան նախապատերազմյան ժամանակ, ինդուստրիան տալիս և յոթն անդամ ավելի արտադրանք, քան նախապատերազմյան ժամանակ, իսկ ժողովրդական յեկամուան աճել և չորս անդամ՝ համեմատած նախապատերազմյան ժամանակի հետ: Այս բոլորը փաստեր են և վոչ թե խոսուումներ: (Յերկարանի ծափահարություններ):

Ապա, Խորհրդային իշխանությունը վոչնչացրեց գործադրկությունը, կիրառեց կյանքում աշխատանքի

իրավունքը, հանդոսի իրավունքը, կրթության իրավունքը, բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի համար ապահովեց լավագույն նյութական և կուլտուրական պայմաններ, ապահովեց ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի կենսագործումը՝ քաղաքացիների գաղտնի քվեարկության պայմաններում։ Այս բոլորը փաստեր են և վոչ թէ խոստումներ։ (Յերկարածու ծափահարություններ)։

Վերջապես, ԽՍՀՄ-ն տվեց նոր Սահմանադրության նախագիծ, վորը վո՛չ թէ խոստում ե, այլ այդ հանրածանոթ փաստերի գրանցում և որենսդրական ամրապնդում, գրանցումն ու որենսդրական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք ե բերված ու նվաճված։

Հարց ե ծագում. այս բոլորից հետո ինչի յե հանդում գերմանական ոֆիցիոզի պարոնների շաղակատությունը «պոտյումկինյան գյուղերի» մասին, յեթե վոչ այն բանին, վոր նրանք նպատակ են դրել թաղցնելու ժողովրդից ճշմարտությունը ԽՍՀՄ-ի մասին, մոլորեցնելու ժողովրդին, խարելու նրան։

Սրանք են փաստերը։ Իսկ փաստերը, ինչպես ասում են, համառ բան են։ Գերմանական ոՓիցիոզի պարոնները կարող են ասել՝ ավելի՛ վատ փաստերի համար։ (Ընդհանուր ծիծաղ)։ Բայց այն ժամանակ նրանց կարելի յե պատասխանել ոռուական հայտնի առաջլածքի այս խոսքերով— «հիմարների համար որենք չկա»։ (Ուրախ ծիծաղ, յերկարածու ծափահարություններ)։

Քննադատների յերրորդ խումբը հակառակ չե ընդունելու Սահմանադրության նախագծի վորոշ արժա-

նիքները, նա գրական յերեսույթ ե համարում այդ նաև խաղիծը, բայց այդ խումբը՝ արի ու տես, վոր շատ ե կասկածում, թէ կարելի կլինի<sup>®</sup> արդյոք այդ Սահմանադրության մի շարք գրույթները կենսագործել, վորովհետեւ նա համոզված ե, վոր այդ գրույթներն ընդհանրապես անիրագործելի յեն և պետք ե մնան թղթի վրա։ Դրանք, մեղմ ասուծ, սկեպտիկներ են։ Դրանք, այդ սկեպտիկները, գոյություն ունեն բոլոր յերկերներում։

Պետք ե ասել, վոր մենք գրանց առաջին անդամը չե, վոր հանգիպում ենք։ Յերբ բոլցեիկները 1917 թ. վերցնում եյին իշխանությունը, սկեպտիկներն տառամ եյին. բոլցեիկները, թերեւ, վատ մարդիկ չեն, բայց իշխանության գործը նրանց մոտ առաջ չի գնա, նրանք կապարվեն։ Սակայն, իրականում դուրս յեկավ, վոր տապալվեցին վո՛չ թէ բոլցեիկները, այլ սկեպտիկները։

Քաղաքացիական պատերազմի և ոտարերկըյա ինտերվենցիայի ժամանակ սկեպտիկների այդ խումբն ասում եր. Խորհրդային իշխանությունն, իհարկե, վատ բան չե, բայց Դենիկենը կուչակի հետ մեկակց, ողլուս ոտարերկքացիները, թերեւ, կհաղթահարեն նրան։ Սակայն, իրականում դուրս յեկավ, վոր սկեպտիկներն այսակեղ ել սխարվեցին իրենց հաշիվներում։

Յերբ Խորհրդային իշխանությունը հրապարակեց առաջին հնգամյա պլանը, սկեպտիկները նորից ասպարեզ յեկան, ասելով. հնգամյակը, իհարկե, լավ բան ե, բայց նա հազիվ թէ իրագործելի լինի. պետք ե յենթագրել, վոր բոլցեիկների մոտ հնգամյակի գործը գլուխ չի դա. Սակայն, փաստերը ցույց տվին, վոր

սկեպտիկների բախտը նորից չքանեց—հնգամյա պլանն  
իրադորձվեց չորս տարում:

Նույն բանը պետք է տաել նոր Սահմանադրության  
նախագծի և սկեպտիկների կողմից այդ Սահմանա-  
դրության քննադատության մասին։ Բավական եղ  
հրապարակել նախադիմը, վորովեսի քննադատությի  
այդ խումբը նորից բեմ դուրս գար իր տաղմակալի  
սկեպտիսով, Սահմանադրության մի քանի դրույթների  
իրազործելիության վերաբերյալ իր կասկածներով։  
Վոչ մի հիմք չկա կասկածելու այն մասին, վորովեսի  
տիկները կտապուլվեն նաև տվյալ դեպքում, կոտորու-  
վեն այժմ նույնպես, ինչպես քանից տապալվել են  
անցյալում։

Քննադատությի չորրորդ խումբը, դրոհելով նոր  
Սահմանադրության նախագծի վրա, բնութագրում է  
այն վորովես «տեղաշարժ դեպի աջ», վորովես «հրա-  
ժարումն պրոլետարիատի դիկտատուրայից», վորովես  
«բոլշևիկյան ռեժիմի վերացում»։ «Բոլշևիկները դե-  
պի աջ ճոճվեցին, այդ փաստ ե», — ասում են նրանք  
դանապան ձայներով։ Այդ տեսակետից առանձնապես  
ջանք են գործ գնում մի քանի լեհական և մասամբ  
ամերիկյան թերթեր։

Ի՞նչ կարելի յե տաել այդ, թող ներդի տաել, քըն-  
նադատությի մասին։

Յեթե բանվոր դաստկարգի դիկտատուրայի բա-  
զայի ընդարձակումը և դիկտատուրայի վերածումը  
հասարակության պետական զեկավարման ավելի  
ՀՈԴՎԱԾ 13. Տնտեսական և քաղաքական, ինչպես և պաշտպանության գծով փոխադարձ ողնություն իրագործելու նպատակով, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կամավոր կերպով միանալով իրավահամասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների—մուսասամանի ԽՄՀՀ, Ռէկրաֆտական ԽՍՀ, Ադրբեյջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Թուրքենական ԽՍՀ, Ռուգելական ԽՍՀ, Տաջիկական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ և Կիրգիզական ԽՍՀ—հետ, կազմում ե միութիւնական պետությունը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Հական պետություն— Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Յենելով գրանից, Հայկական ԽՍՀ ապահովում ե ԽՍՀ Միությանը՝ հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների՝ այն իրավունքները, վորոնք սահմանված են ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածով:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության 14-րդ հոդվածի շրջանակներից գուրս Հայկական ԽՍՀ պետական իշխանությունն իրագործում ե ինքնուրույն կերպով, լիովին պահպանելով իր սուվերեն իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 14. Հայկական ԽՍՀ իրեն իրավունք և վերապահում ազատ կերպով գուրս գալու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից:

ՀՈԴՎԱԾ 15. Հայկական ԽՍՀ տերիսորիան չի կարող փոփոխվել առանց Հայկական ԽՍՀ ամաձայնության:

ՀՈԴՎԱԾ 16. Խորհրդային սոցիալիստական Հանրապետությունների Միության որենքները պարտադիր են Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տերիսորիայում:

ՀՈԴՎԱԾ 17. Հայկական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում ե ԽՍՀՄ քաղաքացի:

Հայկական ԽՍՀ տերիսորիայում մյուս բոլոր Միութենական Հանրապետությունների քաղաքացիներն ողափում են Հայկական ԽՍՀ քաղաքացիների բոլոր իրավունքներով:

ՀՈԴՎԱԾ 18. Հայկական ԽՍՀ իրավությանը, հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների պետությունը մատուցվում է Հայկական ԽՍՀ պահպանական պարտադիր աշխատավորությանը:

ըի և պետական կառավարման մտքմինների, յենթակա յեն՝

ա) Հայկական ԽՍՀ Սահմանադրության սահմանումը և նրա կատարման վերահսկողությունը.

բ) Հայկական ԽՍՀ վարչական-տերիտորիալ բաժանումը.

գ) ԽՍՀՄ Գերազույն Խորհրդին Հայկական ԽՍՀ-ում նոր շրջաններ կազմելու վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը.

դ) Հայկական ԽՍՀ որենքների հրատարակումը.

ե) պետական կարգի և քաղաքացիների իրականքների պահպանությունը.

զ) Հայկական ԽՍՀ ժողովրդա-տնտեսական պլանի հաստատումը.

է) Հայկական ԽՍՀ ոլետական բյուջեի հաստատումը.

ը) պետական և տեղական հարկերի, տուրքերի և կոչ-հարկային յեկամուտների սահմանումը՝ ԽՍՀՄ որենսդրության համապատասխան.

թ) Հայկական ԽՍՀ շրջանների և քաղաքների տեղական բյուջեների իրագործման ղեկավարումը.

ժ) ապահովագրական և խնայողական գործի ղեկավարումը.

ժա) հանրապետական և տեղական մարմիններին ցենթրալ բանկերի, արդյունաբերական, գյուղատնտեսական և առևտրական ձեռնարկությունների ու կազմակերպությունների կառավարումը, ինչպես և տեղական արդյունաբերության ղեկավարումը.

ժը) Միությանը յենթակա ձեռնարկությունների

գրության և կառավարման վերահսկողությունն ու հետևելը.

ժդ) Հողից, ընդերքից, անտառներից ու ջրերից տղամվելու կարգի սահմանումը.

ժդ) բնակարանային և կոմունալ տնտեսության, բնակարանային շինարարության և քաղաքների ու այլ բնակավայրերի բարեկարգության ղեկավարումը.

ժե) ճանապարհային շինարարությունը, աեղական տրանսպորտի և կառլի ղեկավարումը.

ժզ) աշխատանքային որենսդրությունը.

ժէ) առողջապահության գործի ղեկավարումը.

ժը) սոցիալական ապահովության գործի ղեկավարումը.

ժթ) տարրական, միջնակտրդ և բարձրագույն կըրպության գործի ղեկավարումը.

ի) Հայկական ԽՍՀ կուլտուրական-լուսավորական և գիտական կազմակերպությունների ու հիմնարկների ղեկավարումը և հանրապետական նշանակություն ունեցող կուլտուրական-լուսավորական կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

իա) Փեղիկական կուլտուրայի և սպորտի գործի կազմակերպումն ու ղեկավարումը.

իբ) Հայկական ԽՍՀ դատական մարմինների կազմակերպումը.

իգ) Հայկական ԽՍՀ քաղաքացիության իրավունք սարլ.

իդ) Հայկական ԽՍՀ դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիներին ամնիստիա և ներումն չնորհելու իրավունքը.

ՀՈԴՎԱԾ 19. Հայկական ԽՍՀ բաղկացած ե՝  
Ազգպետականի, Ալավերդու, Ախուայի, Ամառիայի,  
Աշտարակի, Աղաբանի, Արթիկի, Բառաբեկչարի, Գո-  
րիսի, Դելիջանի, Թալինի, Իջևանի, Լենինականի, Կի-  
րովականի, Կոտայքի, Հոկտեմբերյանի, Ղամարլուի,  
Ղափանի, Մարտունու, Մեղրու, Միկոյանի, Նոր-Բա-  
յաղետի, Շամշադինի, Սիսիանի, Ստեփանավանի,  
Վաղարշապատի, Վեղու շրջաններից և ըրջանների  
կազմի մեջ չմտնող Յերեան քաղաքից:

### ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԵԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 20. Հայկական ԽՍՀ պետական իշխա-  
նության բարձրագույն մարմինը հանդիսանում է Հայ-  
կական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 21. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդն ընտրվում է Հայկական ԽՍՀ քաղաքացիների  
կողմից՝ ըստ ընտրական շրջանների, չորս տարի ժա-  
մանակով, 5000 բնակչից մի պատգամավորի նորմա-  
յով:

ՀՈԴՎԱԾ 22. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդն իրազործում է Հայկական ԽՍՀ Սահմանադրու-  
թյան 13-րդ և 18-րդ հոդվածներով Հայկական ԽՍՀ  
վերապահված բոլոր իրավունքները, ինչ չափով վոր  
դրանք, համաձայն Սահմանադրության, չեն մտնում  
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդին հաշվետու մար-  
մինների՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախա-

գահության, Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսար-  
ների Խորհրդի և Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կո-  
միսարիաների իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 23. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդը Հայկական ԽՍՀ միակ որենսդիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 24. Որենքը հաստատված է համարվում,  
յեթե դա ընդունված է Հայկական ԽՍՀ Գերագույն  
Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնու-  
թյամբ:

ՀՈԴՎԱԾ 25. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհր-  
դի ընդունած որենքները հրապարակվում են Հայկա-  
կան ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նա-  
խագահի և քարտուղարի ստորագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 26. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդն ընտրում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհր-  
դի նախագահ և նրան յերկու տեղակալներ:

ՀՈԴՎԱԾ 27. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի  
նախագահը ղեկավարում է Գերագույն Խորհրդի նիս-  
տերը և տնօրինում է նրա ներքին կարգը:

ՀՈԴՎԱԾ 28. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդն ընտրում է Գերագույն Խորհրդի նախագահու-  
թյուն՝ բաղկացած Գերագույն Խորհրդի նախագահու-  
թյան նախագահից, նրա յերկու տեղակալից, նախա-  
գահության քարտուղարից և նախագահության 9 ան-  
դամից:

ՀՈԴՎԱԾ 29. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհր-  
դի նախագահությունը հաշվետու յէ Հայկական ԽՍՀ  
Գերագույն Խորհրդի առաջ իր ամբողջ զործունեցու-  
թյան համար:

ՀՈԴՎԱԾ 30. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի  
Նախագահությունը՝

ա) Հրավիրում ե Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հրդի նստաշրջանները.

բ) մեկնարանում ե Հայկական ԽՍՀ որենքները,  
Հրատարակում ե Հրամանագրեր.

գ) կատարում ե համաժողովրդական հարցում (ռե-  
ֆերենզում).

դ) վերացնում ե Հայկական ԽՍՀ Ժողովրդական  
Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրու-  
թյունները՝ որենքին անհամապատասխան լինելու դեպ-  
քում.

ե) Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստա-  
շրջանների միջև ընկած ժամանակամիջոցում, Հայկա-  
կան ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նա-  
խագահի առաջադրմամբ, պաշտոնից ազատում և  
նշանակում ե Հայկական ԽՍՀ առանձին Ժողովրդական  
Կոմիսարների, հետագայում ներկայացնելով Հայկա-  
կան ԽՍՀ Գերագույն Խորհրդին ի հաստատություն.

զ) պարզեատրում ե պատվո դրով և տալիս է Հայ-  
կական ԽՍՀ պատվավոր կոչումներ.

է) տալիս է Հայկական ԽՍՀ քաղաքացիության ի-  
րավունք.

ը) իրավործում ե Հայկական ԽՍՀ դատական մար-  
մինների էովմից դատավարութած քաղաքացիներին նե-  
րումն շորհելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 31. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդա-  
դի նստաշրջանները հրավիրում ե Գերագույն Խորհրդի  
Նախագահությունը տարեկան յերկու անգամ:

Վոչ-հերթական նստաշրջաններ հրավիրում ե Հայ-

կական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունն  
իր հայեցաղությամբ, կամ Հայկական ԽՍՀ Գերագույն  
Խորհրդի պատգամավորների մեկ յերրորդի պահան-  
ջով:

ՀՈԴՎԱԾ 32. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդն ընտրում ե մանդատային հանձնաժողով, վորն  
ստուդում ե Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի  
պատգամավորների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադրմամբ  
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը վորոշում ե  
կամ ընդունել առանձին պատգամավորների լիազորու-  
թյունները, կամ բեկանել նրանց ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 33. Հայկական ԽՍՀ Գերագույն Խոր-  
հուրդը, յերբ անհրաժեշտ դանի, նշանակում ե քննիչ  
ու վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի վե-  
րաբերյալ:

Բոլոր հիմնարկներն ու պաշտոնատար անձերը  
պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պա-  
հանջները և նրանց ներկայացնել անհրաժեշտ նյութեր  
և փաստաթղթեր:

ՀՈԴՎԱԾ 34. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդ-  
դի պատգամավորը չի կարող գատական պատասխանա-  
տվության կանչվել կամ ձերբակարիկել առանց Հայկա-  
կան ԽՍՀ Գերագույն Խորհրդի համաձայնության, իսկ  
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանների  
միջև ընկած ժամանակաշրջանում—առանց Հայկական  
ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության համա-  
ձայնության:

ՀՈԴՎԱԾ 35. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհր-  
դի լիազորությունները լրացնելուց հետո Հայկական

ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց վոչ ուշ քան յերկու տամավա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 36. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը պահպանում է իր լիազորությունները մինչև Հայկական ԽՍՀ նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նոր Նախագահության կազմվելը:

ՀՈԴՎԱԾ 37. Հայկական ԽՍՀ նորընտիր Գերագույն Խորհրդը հրավիրվում է Հայկական ԽՍՀ Նախկին կազմի Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ վոչ ուշ, քան ընտրություններից մեկ ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 38. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդը կազմում է Հայկական ԽՍՀ կառավարություն — Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդ:

ՀՈԴՎԱԾ 39. Հայկական ԽՍՀ որենքները, ինչպես նաև Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերն ու մեկնարանությունները, Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները հրամարկում են Հայերեն, ոռւսերեն և աղբերեջանյան լեզուներով:

#### ՀԱՅԻՆ IV

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ՀՈԴՎԱԾ 40. Հայկական ԽՍՀ պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 41. Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան, իսկ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նըստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության առաջ, վորին հաշվետու յե:

ՀՈԴՎԱԾ 42. Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ որենքների, ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ որենքների, վորոշումների ու կարգադրությունների՝ հրատարակում և վորոշումներ ու կարգադրություններ և ստուգում և նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 43. Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր և Հայկական ԽՍՀ ամբողջ տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 44. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը՝

ա) միավորում և ուղղություն ե տալիս Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարիատների և իր գերատեսչությանը յենթակա տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին. միավորում և ստուգում ե ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիտարիատների լիազորների աշխատանքը.

բ) միջոցներ ե ձեռք առնում ժողովրդա-տնտեսական ոլլանն իրագործելու.

գ) միջոցներ ե ձեռք առնում Հայկական ԽՍՀ պետական և տեղական բյուջեներն իրագործելու.

դ) միջոցներ ե ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու.

ե) ղեկավարում և ստուգում ե տշխատավորների պատգամավորների շրջանային և քաղաքային Խորհուրդների գործադիր կոմիտեների աշխատանքը.

զ) անհրաժեշտ ղեղքերում կազմում ե Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհրդին կից տընտեսական և կուլտուրական շինարարություն գործերի հատուկ կոմիտեներ և գլխավոր վարչություններ:

ՀՈԴՎԱԾ 45. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդն իրավունք ունի կառեցնել աշխատավորների պատգամավորների քաղաքային և շրջանային Խորհուրդների վորոշումներն ու կարդադրությունները, վերացնել աշխատավորների պատգամավորների վորոշումներն ու կարդադրությունները:

Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդն իրավունք ունի վերացնել Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների հրամաններն ու հրահանդերը:

ՀՈԴՎԱԾ 46. Հայկական ԽՍՀ կառավարությունը կամ Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարը, վորոնց ուղղված և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորի հարցապնդումը, պարտավոր են վոչ ուշ քան յերեք որվա ընթացքում գրավոր կամ բանավոր պատասխան տալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդում:

ՀՈԴՎԱԾ 47. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը կազմվում և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հետեւյալ կազմով.

Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի նախագահ,

Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների նախագահական տեղակալներ,

Գետական Պլանային Հանձնաժողովի նախագահ, Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների

Մննդի արդյունաբերության,

Թեթև արդյունաբերության,

Սննդառային արդյունաբերության,

Հողագործության,

Ֆինանսների,

Ներքին առեւտրի,

Ներքին գործերի,

Արդարագանության,

Առողջապահության,

Լուսավորության,

Տեղական արդյունաբերության,

Կոմունալ անտեսության,  
Սոցիալական ապահովության:  
ԽՍՀՄ-ի Մթերուժների Կոմիտեյի լիազոր,  
Արվեստների գործերի վարչության պետ,  
Բնդհանուր Միութենական Ժողովրդական Կոմիտարիատների լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 48. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք վերաբերում են Հայկական ԽՍՀ իրավասությանը:

ՀՈԴՎԱԾ 49. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարները համապատասխան Ժողովրդական Կոմիտարիատների իրավասության սահմաններում՝ ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ որենքների, ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդների վորոշումների ու կարգադրությունների և միութենական -հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն այլ որենքների, վորոշումների, կարգադրությունների, հրամանների ու հրահանգների՝ հրատարակում են հրամաններ ու հրահանգներ և ստուգում են նըանց կառարումը:

ՀՈԴՎԱԾ 50. Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարիատները լինում են միութենական-հանրապետական կամ հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 51. Հայկական ԽՍՀ միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատները ղեկավարում են Հայկական ԽՍՀ պետական կառավարման իրենց հանձնարարիած ճյուղերը, յենթարկվելով ինչ պես Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդին:

Հըրդին, նույնպես և ԽՍՀՄ համապետասխան միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատներին:

ՀՈԴՎԱԾ 52. Հայկական ԽՍՀ հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարիած ճյուղերը, յենթարկվելով անմիջականորեն Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 53. Հայկական ԽՍՀ միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատների թվին են պատկանում Հայկական ԽՍՀ հետեյալ Ժողովրդական Կոմիտարիատները.

Սննդի արդյունաբերության,  
Թեթև արդյունաբերության,  
Անտառային արդյունաբերության,  
Հողագործության,  
Ֆինանսների,  
Ներքին առևտուրի,  
Ներքին գործերի,  
Արդարադատության,  
Առողջապահության:

ՀՈԴՎԱԾ 54. Հայկական ԽՍՀ հանրապետական Ժողովրդական Կոմիտարիատների թվին են պատկանում Հայկական ԽՍՀ հետեյալ Ժողովրդական Կոմիտարիատները.

Լուսավորության,  
Տեղական արդյունաբերության,  
Կոմունալ տնտեսության,  
Սոցիալական ապահովության:

ՀՈԴՎԱԾ 55. Պետական իշխանության մարմինները շրջաններում, քաղաքներում, ավաններում և գյուղերում հանդիսանում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդները:

ՀՈԴՎԱԾ 56. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, խոշոր քաղաքներում՝ ռայոնական, ավանային և գյուղական Խորհուրդներն ընտրում են համապատասխանորեն շրջանի, քաղաքի, ռայոնի, ավանի և գյուղի աշխատավորները՝ յերկու տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 57. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները (շրջանի, քաղաքի, ռայոնի, ավանի, գյուղի) ղեկավարում են իրենց տերիտորիայի կուտակութական-քաղաքական և սննդեսական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց յենթակա կառավարման մարմինների գործունեյությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, աջակցում են յերկրի պաշտպանումակառավագացմանը, առնելիության ուժեղացմանը, ապահովում են որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը:

ՀՈԴՎԱԾ 58. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ որենքներով իրենց տրիած իրավունքների սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 59. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, ռայոնական, ավանային և գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրվող գործադիր կոմիտեները՝ կազմված նախագահից, նրա տեղակալներից, քարտուղարից և անդամներից:

ՀՈԴՎԱԾ 60. Փոքր բնակավայրերի աշխատավորների պատգամավորների ավանային և գյուղական Խորհուրդների գործադիր և կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրվող նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը:

ՀՈԴՎԱԾ 61. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների (շրջանի, քաղաքի, ռայոնի, ավանի, գյուղի) գործադիր կոմիտեներն իրենց տերիտորիայի կուլտուրական-քաղաքական և տնտեսական շինարարությունը ղեկավարում են աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների և վերադաս պետական մարմինների վորոշումների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 62. Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների գործադիր կոմիտեները շրջանային Խորհուրդների սեսիաներ Հրավիրում են տարեկան վոչ պակաս քան վեց անգամ:

ՀՈԴՎԱԾ 63. Աշխատավորների պատգամավորների քաղաքային, ռայոնական, ավանային և գյուղական Խորհուրդների սեսիաներ (պլենումներ) Հրավիրում են ամսական վոչ պակաս քան մեկ անգամ:

ՀՈԴՎԱԾ 64. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային և ռայոնական Խորհուրդներն իրենց սեսիաների ժամանակ նիստերը վարելու համար ընտրում են նախագահ և քարտուղար:

ՀՈԴՎԱԾ 65. Գյաւղական Խորհրդի նիստերը հրա-  
վիրում և վարում ե գյաւղական Խորհրդի նախագահը:

ՀՈԴՎԱԾ 66. Աշխատավորների պատգամավորների  
Խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականո-  
րեն հաշվեառ յեն ինչպես աշխատավորների պատգա-  
մավորների այն Խորհրդի առաջ, վորն ընտրել ե իրենց,  
նույնպես և աշխատավորների պատգամավորների վե-  
րադաս Խորհրդի գործադիր մարմնի առաջ:

ՀՈԴՎԱԾ 67. Աշխատավորների պատգամավորների  
Խորհուրդների վերադաս գործադիր կոմիտեներն իրա-  
վունք ունեն վերացնել ստորագաս գործադիր կոմիտե-  
ների վորոշումներն ու կարգադրությունները և կասեց-  
նել աշխատավորների պատգամավորների ստորագաս  
Խորհուրդների վորոշումներն ու կարգադրություննե-  
րը:

ՀՈԴՎԱԾ 68. Աշխատավորների պատգամավորնե-  
րի վերադաս Խորհուրդներն իրավունք ունեն վերացնել  
աշխատավորների պատգամավորների ստորագաս Խոր-  
հուրդների և նրանց գործադիր կոմիտեների վորոշում-  
ներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 69. Պետական կառավարման առանձին  
ճյուղերն անմիջականորեն ղեկավարելու համար աշ-  
խատավորների պատգամավորների շրջանային, քաղա-  
քային և ռայոնական Խորհուրդները կազմում են գոր-  
ծադիր կոմիտեների բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 70. Աշխատավորների պատգամավորների  
շրջանային Խորհուրդները կազմում են գործադիր կո-  
միտեների հետեւյալ բաժինները.

Հողային,

Ժողովրդական կրթության,

Փինանսական,  
ներքին առևտուրի,  
առողջապահության,  
սոցիալական ապահովության,  
ընդհանուր,  
ճանապարհային,  
պլանային հանձնաժողով,  
կաղըերի սեկտոր՝ գործադիր կոմիտեյի նախագա-  
հին կից

և բացի այդ, շրջանի անտեսության առանձնա-  
հատկություններին համապատասխան և Հայկական  
ԽՍՀ գերագույն Խորհրդի Նախագահության հաստա-  
մամբ, աշխատավորների պատգամավորների շրջանա-  
յին Խորհուրդները կազմում են կոմունալ և տեղական  
արգյունաբերության բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 71. Շրջանի պայմաններին համապա-  
տասխան, ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ որենքների հիման  
վրա և Հայկական ԽՍՀ գերագույն Խորհրդի Նախագա-  
հության հաստամամբ, Ներքին գործերի Ժողովը-  
գական կոմիսարիատն աշխատավորների պատգամա-  
վորների շրջանային Խորհուրդներին կից կազմում ե իր  
վարչությունները:

ՀՈԴՎԱԾ 72. Աշխատավորների պատգամավորների  
շրջանային Խորհուրդների բաժիններն իրենց գործու-  
նելության ընթացքում յենթարկվում են ինչպես աշ-  
խատավորների պատգամավորների շրջանային Խոր-  
հրդին և նրա գործադիր կոմիտեյին, նույնպես և  
Հայկական ԽՍՀ համապատասխան Ժողովրդական կո-  
միսարիատին:

ՀՈԴՎԱԾ 73. Աշխատավորների պատղամավորների քաղաքային (և քաղաքի ռայոնական) Խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետեւյալ բաժինները.

Փինանսական,  
կոմունալ անտեսության,  
ներքին առևտուրի,  
առողջապահության,  
ժողովրդական կրթության,  
սոցիալական ապահովության,  
ընդհանուր,  
պլանային հանձնաժողով,  
կազմերի սեկտոր՝ գործադիր կոմիտեյի նախագահին կից

և բացի այդ, քաղաքի արդյունաբերության առանձնահատկություններին, քաղաքային և մերձքաղաքային տնտեսության համապատասխան՝ տեղական արդյունաբերության և հողային բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 74. Աշխատավորների պատղամավորների քաղաքային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեյության ընթացքում յենթարկվում են ինչպես աշխատավորների պատղամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեյին, նույնպես և աշխատավորների պատղամավորների շրջանային Խորհրդի համապատասխան բաժնին կամ անմիջականութեն Հայկական ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 75. Եերեան քաղաքի աշխատավորների պատղամավորների Խորհրդի բաժիններն իրենց գործունեյության ընթացքում յենթարկվում են ինչպես

աշխատավորների պատղամավորների Եերեանի քաղաքային Խորհրդին և նրա Գործադիր կոմիտեյին, նույնպես և Հայկական ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին:

ՀՈԴՎԱԾ 76. Աշխատավորների պատղամավորների շրջանային, քաղաքային, ռայոնական, ավանային և գյուղական Խորհուրդների լիազորությունները լրանալուց հետո նրանց գործադիր և կարգադրիչ մարմինները պահպանում են իրենց լիազորությունները մինչև նորընտիր Խորհուրդների կողմից գործադիր ու կարգադրիչ նոր մարմինների կազմվելը:

#### ԳԼՈՒԽ VI

##### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

##### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

##### ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՈԴՎԱԾ 77. Հայկական ԽՍՀ բյուջեն կազմվում ե Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի կողմից և ներկայացվում ե Հայկական ԽՍՀ Գերադույն Խորհրդին ի հաստատություն:

Հայկական ԽՍՀ Գերադույն Խորհրդի կողմից Հաստատված պետական բյուջեն հրապարակվում է ի գիտություն ընդհանուրի:

ՀՈԴՎԱԾ 78. Հայկական ԽՍՀ Գերադույն Խորհրդն ընտրում է Բյուջետային հանձնաժողով, վորը զեկուցում է Գերադույն Խորհրդին իր յեղբակացությունը Հայկական ԽՍՀ պետական բյուջեյի մասին:

ՀՈԴՎԱԾ 79. Հայկական ԽՍՀ պետական բյուջեյի կատարման հաշվետվությունը հաստատվում է Հայկա-

կան ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից և հրատարակվում ե ի գիտություն ընդհանուրի:

ՀՈԴՎԱԾ 80. Շըջանային, քաղաքային, ուսունական և գյուղական Խորհուրդների բյուջեյի մեջ մըսում են տեղական տնտեսությունից ստացված յեկամուաները, նրանց տերիտորիայի վրա ստացված պետական յեկամուաների մասհանումները, ինչպես նաև տեղական հարկերից և տուրքերից դոյցած մուտքերը՝ ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ որենսդրությամբ սահմանված չափերով:

ԳԼՈՒԽ VII

## ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 81. Արդարադատությունը Հայկական ԽՍՀ-ում իրագործվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Դատարանի, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող՝ ԽՍՀՄ հատուկ դատարանների, ժողովրդական դատարանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 82. Գործերի քննարկումը Հայկական ԽՍՀ բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի որենքով հատկապես նախատեսված դեպքերից:

ՀՈԴՎԱԾ 83. Հայկական ԽՍՀ Գերագույն Դատարանը Հայկական ԽՍՀ դատական բարձրագույն մարմինն է: Հայկական ԽՍՀ Գերագույն Դատարանի վրա դրվում է Հայկական ԽՍՀ բոլոր դատական մարմինների դատական գործունեյության հսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 84. Հայկական ԽՍՀ Գերագույն Դատա-

րանն ընտրվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 85. Ժողովրդական դատարաններն ընտրվում են ըլջանի քաղաքացիների կողմից ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղանի քվեարկությամբ—յերեք տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 86. Հայկական ԽՍՀ-ում դատավարությունը կատարվում է՝ այլրեկան լեզվով, իսկ բնակչության ոռուական կամ աղբրեջանյան մեծամասնություն ունեցող ըլջաններում համապատասխանորեն՝ ոռուերեն կամ աղբրեջանյան լեզվուներով, այդ լեզվուներին չոփիրապետող անձերի համար ապահովելով՝ գործի նյութերին լիակատար ծանոթացումը՝ թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 87. Գործերի քննությունը Հայկական ԽՍՀ բոլոր դատարաններում, վորչափով որենքը բացառություններ չի նախատեսում, կատարվում է գոնրաց, ապահովելով՝ մերադրյալի պաշտպանության իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 88. Դատավորներն անկախ են և միայն որենքին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 89. Հայկական ԽՍՀ տերիտորիայի վրա Հայկական ԽՍՀ բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց գերատեսչության յենթակա հիմնարկների, նմանապես և առանձին պաշտոնյանների ու քաղաքացիների կողմից որենքի ճշգրիտ կատարման բարձրագույն հսկողությունն իրավունքում է ինչպես

ԽՍՀՄ դատախազի կողմից անմիջականորեն, նույնագես  
և Հայկական ԽՍՀ դատախազի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 90. Հայկական ԽՍՀ դատախազին նշո-  
նակում է ԽՍՀՄ դատախազը հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 91. Եթանային և քաղաքային դատա-  
խազներին նշոնակում է Հայկական ԽՍՀ դատախազը  
ԽՍՀՄ դատախազի հաստատմամբ, հինգ տարի ժա-  
մանակով:

ՀՈԴՎԱԾ 92. Դատախազության մարմիններն ի-  
րենց ֆունկցիաներն իրագործում են տեղական վորոն  
ժարմնեց անկախ, յենթարկվելով միայն ԽՍՀՄ դա-  
տախազին:

#### ԳԼՈՒԽ V

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 93. Հայկական ԽՍՀ քաղաքացիներն ու-  
նեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված  
աշխատանք ստանալու իրավունք, իրենց աշխատանքի  
քանակի ու վորակի համապատասխան վարձարու-  
թյամբ:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողո-  
վրդական տնտեսության սոցիալիստական կազմա-  
կերմամբ, խորհրդային հառարակության արտադրո-  
ղական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական ճգնաժա-  
մերի հնարավորության վերացմամբ և գործադրկու-  
թյան մեջիցացիայով:

ՀՈԴՎԱԾ 94. Հայկական ԽՍՀ քաղաքացիներն ու-  
նեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների  
ճնշող մեծամասնության համար աշխատանքային որը  
կը ճառատելով՝ հասցնելով 7 ժամի, բանվորների ու ծա-  
ռայողների համար սահմանելով տարեկան արձա-  
կուրե՛ աշխատավարձի պահպանմամբ, աշխատավոր-  
ներին սպասարկելու համար սանտորիաների, հան-  
գըստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրե-  
լով:

ՀՈԴՎԱԾ 95. Հայկական ԽՍՀ քաղաքացիները  
նյութական պահանջովության իրավունք ունեն ծերու-  
թյան, ինչպես նաև հիվանդության և աշխատունա-  
կությունը կորցնելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու  
ծառայողների՝ պետության հաշվին կատարվող սո-  
ցիալական ապահովագրության լայն ծալալմամբ,  
աշխատավորներին ծրի բժշկական ոգնություն ցույց  
տալով, աշխատավորներին ոգտագործման համար  
կուրորտների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 96. Հայկական ԽՍՀ քաղաքացիներն ու-  
նեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պար-  
տադիր տարրական կրթությամբ, անվճար կրթու-  
թյամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձ-  
րագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամաս-  
նությանը արվող պետական թոշակների սիստեմով,  
դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործա-  
րաններում, խորհուտեսություններում, մեքենա-  
տրակառություններում կայաններում ու կոլտնեսություննե-

ըում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ազգոնոմիական ուսուցում կտղմակերպելով։

ՀՈԴՎԱԾ 97. Կնոջը Հայկական ԽՍՀ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում անտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքարական կյանքի բոլոր բնագավառներում։

Կանոնց այդ իրավունքների իրագործման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով՝ աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանդսուի, սոցիալական ապահովագրության՝ կրթության առարեղում, մոր ուժանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամասուրների ու մանկապարտեզների լայն ցանցով։

ՀՈԴՎԱԾ 98. Հայկական ԽՍՀ քաղաքացիների իրավահավասարությունը անտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, հանդիսանում է անխախուրենք։

Իրավունքների վորեիցե ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդհանարարակը, ռասայական ու ազգային պատկանելությունից յենելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առաջելու ըստներ սահմանելու, ինչպես նաև ռասայական ու ազգային բացառիկության կամ առելության ու արհամարհանքի ամեն տեսակ քարոզ-պատրժում են որենքով։

ՀՈԴՎԱԾ 99. Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով յեկեղեցին Հայկական ԽՍՀ-ում բաժանված ե պետությունից և գովրոցը՝ յեկեղեցուց։ Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդայի ազատությունը ճանաչվում ե բոլոր քաղաքացիների համար։

ՀՈԴՎԱԾ 100. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու նպատակով Հայկական ԽՍՀ քաղաքացիների համար որենքով ապահովվում է.

- ա) խոսքի ազատություն.
- բ) մամուլի ազատություն.
- գ) ժողովների ու միտինգների ազատություն.
- դ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատություն։

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշտոներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն իրագործելու համար անհամարեցած ուրիշ նյութական պայմաններ։

ՀՈԴՎԱԾ 101. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնազործունեյությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով՝ Հայկական ԽՍՀ քաղաքացիների համար ապահովվում է իրավունք՝ միավորվելու հասարակական կազմակերպությունների մեջ — արհեստական միություններ, կոոպերատիվ միավորումներ, յերիտասարդության

կազմակերպություններ, սպորտային և պաշտպանական կան կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ. իսկ բանվոր զասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու դիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն և՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մզած սպայքարում և աշխատավորների բոլոր՝ ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիգն և հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 102. Հայկական ԽՍՀ քաղաքացիների համար ապահովվում և անձի անձեռնմխելիություն: Վոչ վոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան զատարանի վորոշմամբ կամ զատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 103. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակադրության զաղոնիությունը պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 104. Հայկական ԽՍՀ ապաստանի իրավունք և տալիս ոտարերկրյաց տյն քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ զիտական գործունեյության, կամ աղբային-աղատաղբական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 105. Հայկական ԽՍՀ յուրաքանչյուր բողաքացի պարտավոր և սպահանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունները, կատարել որենք-

ները, սպահանել աշխատանքի կարգապահությունը ազնվորեն վերաբերվել դեպի հաստրակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 106. Հայկական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և սպահանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորոնք խորհրդային կարգերի սրբազնությունը ու անձեռնմխելի հիմք, վորապես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուրը, վորապես բոլոր աշխատավորների ունեցողը ու կուլտուրական կյանքի աղբյուրը:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վոտնակություն անող անձերը ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 107. Բնդհանուր զինվորական պարտականությունն որենք և հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում Հայկական ԽՍՀ քաղաքացիների պատվավոր պարտականությունն եւ:

ՀՈԴՎԱԾ 108. Հայրենիքի պաշտպանությունը Հայկական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտքն եւ: Հայրենիքին զավաճանելը—յերգումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության սաղմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են որենքի ամրողջ խստությամբ, վորապես ամենածանր չարազործություն:

ՀՈԴՎԱԾ 109. Աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների՝ Հայկական ԽՍՀ Գերազույն Խորհրդի աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, ռայոնական-ավանային ու գյուղական Խորհուրդների պատգամավորների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի չիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 110. Պատգամավորների ընտրություններն ընդհանուր են. Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքայինները, վորոնց 18 տարին լրացել են, անկախ ուստայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, դույքային դրությունից և անցյալ գործունելությունից, իրավունք ունեն ժամանակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատավարաբաված են՝ ընտրական իրավունքների դրկումով:

ՀՈԴՎԱԾ 111. Պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքայի ունի մեկ ձայն, բոլոր քաղաքացիներն ընտրություններին ժամանակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 112. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ողավում են տղամարդկանց հետ հավասար:

ՀՈԴՎԱԾ 113. Կարմիր բանակի չարչերում գըտ-

նըվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ողավում են բոլոր քաղաքացիների հետ հավասար:

ՀՈԴՎԱԾ 114. Պատգամավորների ընտրություններն ուղղակի յեն. աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների ընտրությունները, սկսած աշխատավորների պատգամավորների գյուղական ու քաղաքային Խորհրդից մինչև Հայկական ԽՍՀ Գերազույն Խորհրդը, քաղաքացիները կատարում են անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 115. Պատգամավորների ընտրության ժամանակ քվեարկությունը գաղտնի յե:

ՀՈԴՎԱԾ 116. Հայկական ԽՍՀ աշխատավորների պատգամավորների Խորհրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական շրջանների, հետևյալ նորմաներով.

Շրջանային Խորհրդինը—նայած շրջանի մեծությանը՝ մեկ պատգամավոր վոչ պակաս քան 300 բնակչից և վոչ ավելի քան 1000 բնակչից.

Քաղաքային և քաղաքի ուստական Խորհրդներինը—նայած քաղաքի կամ քաղաքի ուստակի մեծությանը՝ մեկ պատգամավոր վոչ պակաս քան 100 բնակչից և վոչ ավելի քան 1000 բնակչից.

Գյուղական և ավանային Խորհրդներինը—նայած գյուղական կամ ավանային Խորհրդի գործունելության սահմանների մեծությանը՝ մեկ պատգամավոր վոչ պակաս քան 25 բնակչից և վոչ ավելի քան 150 բնակչից:

Աշխատավորների պատգամավորների յուրաքանչյուր շրջանային, քաղաքային, ուստական, ա-

վանային և գյուղական Խորհրդի ընտրական նորմա-  
ները սահմանվում են «Հայկական ԽՍՀ աշխատավոր-  
ների պատգամավորների Խորհուրդների ընտրու-  
թյունների վերաբերյալ Կանոնադրությամբ»՝ սույն  
հոդվածում մատնանշված ընտրական նորմաների  
սահմաններում :

ՀՈԴՎԱԾ 117. Ընտրությունների ժամանակ թեկ-  
նածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջան-  
ների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապա-  
հովվում է աշխատավորների հասարակական կազմա-  
կերպությունների ու ընկերությունների—կոմունիս-  
տական կուսակցական կազմակերպությունների, ար-  
հեստակցական միությունների, կոռպերատիվների,  
յերիտասարդության կազմակերպությունների, կուլ-  
տուրական ընկերությունների համար:

ՀՈԴՎԱԾ 118. Յուրաքանչյուր պատգամավոր  
պարտավոր ե ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշ-  
խատանքի և աշխատավորների պատգամավորների  
Խորհրդի աշխատանքի մասին և կարող ե ամեն ժամա-  
նակ հետ կանչվել ընտրողների մեծամասնության վո-  
րոշմամբ, որենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ, ԳԵՐԲԸ,  
ԴՐՈՇԱԿԸ ՅԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 119. Հայկական ԽՍՀ պետական լեզուն  
Հայերենն է:

Հայկական ԽՍՀ տերիտորիայում բնակվող ազ-  
գային փոքրամասնությունների համար ապահովվում

է նրանց մայրենի լեզվի զարգացումն ու գործածու-  
թյունն ինչպես կուլտուրական, նույնպես և պետական  
հիմնարկներում :

ՀՈԴՎԱԾ 120. Հայկական Խորհրդային Սոցիա-  
լիստական Հանրապետության պետական գերբը բաղ-  
կանում ե՝ Մեծ և Փոքր Արարատների պատկերից,  
վորի վերևում մուրճ ու մանգաղ հնգաթև աստղի վրա՝  
ձառագայթներով շրջապատված, ստորոտում՝ խաղո-  
ղի վորթ վողկույզներով ու տերևներով, աջ ու ձախ  
կողմից՝ ցորենի հասկեր։ Գերբի շուրջը — յեղեր-  
քում, մակագրություն հայերեն լեզվով՝ «Հայկական  
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն»,  
յեղերքի ներքեսում, կարմիր Փոնի վրա մակագրու-  
թյուն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ «Պրոլետար-  
ներ բոլոր յերկիրների, միացե՛ք»։

ՀՈԴՎԱԾ 121. Հայկական Խորհրդային Սոցիա-  
լիստական Հանրապետության պետական դրոշակն է  
կարմիր գույնի կտոր, վորի ձախակողմյան վերին  
անկյունում, կոթի մոտ, զետեղված են վոսկեգույն  
մուրճ ու մանգաղ և «ՀԽՍՀ» տառերը։

Դրոշակի լայնության և յերկայնության հարա-  
բերությունն է՝ 1:2։

ՀՈԴՎԱԾ 122. Հայկական Խորհրդային Սոցիա-  
լիստական Հանրապետության մայրաքաղաքն է Յե-  
րևան քաղաքը։

ԳԼՈՒԽ

ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 123. Հայկական ԽՍՀ Սահմանադրու-  
թյան փոփոխումը կատարվում է միայն Հայկական

ԽՍՀ Գերագույն Խորհրդի վորոշմամբ՝ ընդունված  
նրա ձայների առնվազն յերկու յերրորդի մեծամաս-  
նությամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ  
9-ՐԴ ԱՐՏԱԿԱԾՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ընկ. ի. Վ. Ստալինի գեկուցումը Խորհուրդների VIII  
Համամիուրենական Արտակարգ Համագումարում ԽՍՀ  
Միուրյան Սահմանադրության նախագծի մասին, 25 նոյեմ-  
բերի 1936 թ.։

I

Սահմանադրական Հանձնաժողովի կազմումը և նրա իրեն-  
քերները . . . . . 9

II

1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակաշրջանում  
ԽՍՀՄ-ի կյանքում տեղի ունեցած փոփոխությունները . . . . . 12

III

Սահմանադրության նախադի հիմնական առանձնահատ-  
կությունները . . . . . 25

IV

Սահմանադրության նախադի բուրժուական քննադատու-  
թյունը . . . . . 34

V

Ռողոսումներ և լրացումներ Սահմանադրության նախադի  
գերաբերյալ . . . . . 47

VI

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նշանակությունը . . . . . 66

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-  
թյան Սահմանադրությունը (Հիմնական Որենքը)։

Վորոշում Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հան-  
րապետության Խորհրդների 9-րդ արտակարգ Համագու-

մազի՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-	
տության Սահմանադրության (Հիմնական Որենքի) հաս-	
տատման մասին . . . . .	71
Վորոշում Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրա-	
պետության Խորհուրդների 9-րդ Արտակարգ համագումարի՝	
Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության	
գերազույն Խորհրդի ընտրությունների մասին . . . . .	72
<b>Գլուխ I</b>	73
Հասարակական կառուցվածքը . . . . .	
<b>Գլուխ II</b>	76
Պետական կառուցվածքը . . . . .	
<b>Գլուխ III</b>	
Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության	
պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . .	80
<b>Գլուխ IV</b>	
Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության	
պետական կառավարման մարմինները . . . . .	85
<b>Գլուխ V</b>	
Պետական իշխանության տեղական մարմինները . . . . .	90
<b>Գլուխ VI</b>	
Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության	
բյուջեն . . . . .	95
<b>Գլուխ VII</b>	
Դատարան և դատախազություն . . . . .	96
<b>Գլուխ VIII</b>	
Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտություն-	
թյունները . . . . .	98
<b>Գլուխ IX</b>	
Ընտրական սիստեմը . . . . .	104
<b>Գլուխ X</b>	
Պետական լեզուն, գերբը, դրոշակը և մայրաքաղաքը . . . . .	106
<b>Գլուխ XI</b>	
Սահմանադրությունը փոփոխելու կարգը . . . . .	107

Ֆրազիրներ՝ ընկ. Ի. Վ. Ստալինի զեկուցման Հայերեն թարգմ. —  
 [ ] և Շաղամյան Գինը  
 Զեկուցման թարգմանիչ Տեր-Մինայան Յե.  
 Կոնտրոլ սրբագրիչ Տեր-Մինայան Յե.  
 Տեխն. խմբագիր Խաչատրյան Ս.  
 Սրբագրիչ Արովյան Լ.  
 Դաշտի մասնիչ Ի—4880. Հրատարակություն № 441.  
 Պատվեր № 643. տիրաժ 100.000. Խնդեքս <sup>ԱՀ</sup> <sub>PK</sub>  
 Հանձնված և արտադրության 1937 թ. ապրիլի 20-ին  
 Ստորագրված և տպագրելու 1937 թ. մայիսի 16-ին  
 Գինը 40 կ.

---

Դեհագատի տպագան, Յերևան.

«Ազգային գրադարան



NL0186020

840

ЧИСЛО 40 ЧАС.

И. В. СТАЛИН  
Доклад о проекте  
Конституции  
Союза ССР



КОНСТИТУЦИЯ  
(Основной Закон)  
Армянской Советской  
Социалистической  
Республики

Армпартиздат. Ереван. 1937